Ազգ
Azg
23 ՄԱՐՏ 2012 ՈՒՐԲԱԹ 52(4904)
ISSN: 1829-1651

# Առաջադրումներն ավարտվեցին, անակնկալներ եւս եղան

Երեկ համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերով առաջադրման վերջին օրն էր: Կուսակցությունների մեծ մասն ընտրացուցակները ներկայացրեց երեկվա ընթացքում: 253 անուն ընդգրկող ցուցակ է ներկայացրել ՀՀԿ-ն, ԲՀԿ ցուցակը կազմված է 165 հոգուց, «Օրինաց Երկրի» համամասնական ցուցակում 178 անուն է:

Ընդդիմադիր ՀԱԿ-ը ներկայացրել է 119 անդամ ունեցող համամասնական ցուցակ, մեծամասնական կարգով ՀԱԿ-ից առաջադրվել են Վլադիմիր Կարապետյանը (թիվ 2 ընտրատարածք), Արամ Մանուկյանը (թիվ 4), Վահագն Խաչատրյանը (թիվ 8), Լեւոն Զուրաբյանը (թիվ 9), Ռազմիկ Պետրոսյանը (թիվ 14), Մկրտիչ Սափեյանը (թիվ 15), Սասուն Միքայելյանը (թիվ 25) եւ ուրիշներ:

ՀՅԴ ցուցակը կազմված է 85 անդամից, «Ժառանգության» (ներառյալ «Ազատ դեմոկրատների») ցուցակն ընդգրկում է 101 կուսակցականի անուն:

Մինչ այս էլ արդեն նախորդ օրերին ԿԸՀ համամասնական ցուցակներ էին ներկայացրել Կոմկուսը, Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը եւ «Միավորված հայեր» կուսակցությունը:

Մեծամասնական առաջադրումներից մի քանի հետաքրքրական մրցակիցների ներկայացնելով՝ նշենք, որ թիվ 1 ընտրատարածքում մրցելու են գործարար Ռուբեն Հայրապետյանը, «Ժառանգությունից» Ստյոպա Սաֆարյանը, լրագրող Գայանե Առուստամյանը (եւս մեկը առաջադրված կա), թիվ 4-ում՝ Զարուհի Փոստանջյանը, «168 ժամ» թերթի խմբագիր Սաթիկ Սեյրանյանը, ՀԱԿ-ից Արամ Մանուկյանը, ՀՀԿ-ից գործարար Արտակ Սարգսյանը (ՍԱՍ-ի Արտակ) ու եւս երկու առաջադրված: Թիվ 7 ընտրատարածքում մրցակցությունն ընթանալու է գործարար Սամվել Ալեքսանյանի, «Ժառանգության» ղեկավար Րաֆֆի Հովհաննիսյանի եւ «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանի միջեւ, թիվ 9-ում «Ժառանգությունից» Ռուբիկ Հակոբյանը մրցելու է ՀԱԿ-ից Լեւոն Զուրաբյանի հետ (առաջադրվել են նաեւ Նապոլեոն Ազիզյանն ու ԱԺ պատգամավոր Ռուբեն Սադոյանը): Թիվ 10-ում գործարարներ Սուքիասյանները (առնվազն մեկը) պետք է պայքարեն մեկ այլ գործարարի՝ Գարեգին Նուշիկյանի դեմ (եւս մեկ առաջադրված կա՝ բացի նրանցից): ՕԵԿ-ից Հեղինե Բիշարյանը, ի թիվս Բելաջիոյի Գրիգոր Մարգարյանի, նաեւ այլոց հետ է պայքարելու: Թիվ 17 ընտրատարածքում Անահիտ Բախշյանի դեմ են դուրս եկել լրագրող Գոհար Վեզիրյանը, Տեր-Պետրոսյանի եղբորորդին եւ այժմ արդեն ԲՀԿ-ական պատգամավոր Լյովա Խաչատրյանը: Տիգրան Կարապետիչը թիվ 17-ում մրցելու է Հովիկ Աբրահամյանի եղբոր՝ Հենրիկ Աբրահամյանի հետ (այլ առաջադրվածներ եւս կան): Այլեւս ՀՀԿ-ական Վիկտոր Դալլաքյանի հետ այս անգամ թիվ 30-ում եւս 5 հոգի են առաջադրվել: Թիվ 41-ում մարքսիստ Դավիթ Հակոբյանի հետ պայքարելու են Տավուշի մարզպետի տեղակալը, Ազգային ժողովի պատգամավոր (ՀՀԿ) Հակոբ Հակոբյանը եւ եւս մեկ առաջադրված:

Ինչպես տեսնում եք՝ մեծամասնական կարգով առաջադրվածների առումով ինտրիգների պակաս չկա, իսկ համամասնական կարգով ընտրացուցակների վերջնական տարբերակները նույնպես բավական հետաքրքրական են, այնպես որ առաջիկայում դեռ կբզբզենք:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Ո՞ւմ են ասում՝ խաղաղության, այլ ոչ պատերազմի





Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Խաղաղության հասնելու ուղղությամբ առաջընթաց կա», ղարաբաղյան հակամարտության մասին 1992-ի կոնֆերանսից 20 տարի անց հայտարարում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներից ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը, Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը եւ Ֆրանսիայի ԱԳ նախարար Ալեն Ժյուպեն:

Արտգործնախարարների երեկ տարածված համատեղ հայտարարությամբ նշվում է, որ համանախագահող երկրների երեք նախագահների Լ'Աքվիլայի (2009), Մուսկոկայի (2010) եւ Դովիլի (2011) հայտարարություններով ընդգծվել են համապարփակ խաղաղության կարգավորման շրջանակի տարրերը: Իսկ 2012-ի հունվարի 23-ին Սոչիում Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների համատեղ հայտարարությունն էլ երկու կողմերի պատրաստակամությունն է արտահայտում՝ «արագացնելու հիմնարար սկզբունքների հիման վրա համաձայնության հասնելու գործընթացը»: *Տես էջ 2*

# Արյունոտ Նովրուզ Թուրքիայում

## *Սպանվել է 6 ոստիկան, շուրջ 40-ը՝ վիրավորվել, կան մի քանի տասնյակ ձերբակալվածներ*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Նովրուզը պարսկերեն արտահայտություն է, կազմված նոր եւ ռուզ, այսինքն՝ նոր եւ օր բառերից, նշանակում է Ամանոր: Իրանական ժողովուրդները, քրդերը ներառյալ, դա նշում են մարտի 21-ին: Նովրուզը նշում են նաեւ այն ժողովուրդները, որոնք կրում են իրանական մշակույթի ազդեցությունը, ինչպես, ասենք՝ ուզբեկները, ղրղզները, ղազախներն ու ադրբեջանցիները:

Ըստ երեւույթին այս հանգամանքը պատճառ է հանդիսացել, որ Թուրքիան թուրքերի հետ որեւէ առնչություն չունեցող Նովրուզը հռչակի համաթուրքական տոն: Ավելին, նա տոնակատարություններին վառվող կրակն էլ պայմանավորի «Էրգենեքոնի» այսպես կոչված էպոսի հետ: Այս էպոսը իբր ձեւավորվել է թյուրքական խաքանաթում, տալիս է նախաթուրքերի Ալթայում հայտնվելու եւ այնտեղից Միջին Ասիա ներթափանցելու պատմություն: *Տես էջ 5*

# Մերոնք գնում են Բաքու՝ «Եվրանեսթի» նիստի՞ն

Արեւելյան գործընկերության խորհրդարանական վեհաժողովի՝ «Եվրոնեսթի» 2-րդ լիագումար նիստին մասնակցելու համար ապրիլի 2-4-ը Բաքու կմեկնի «Եվրոնեսթում» Հայաստանի պատվիրակությունը՝ **Վահան Հովհաննիսյանի** գլխավորությամբ: Այս մասին որոշումը կայացվել է երեկ՝ Ազգային ժողովի նախագահ Սամվել Նիկոյանի մոտ անցկացված խորհրդակցության ժամանակ: Վեհաժողովում ելույթ է ունենալու «Եվրոնեսթի» սոցիալական եւ կրթության հանձնաժողովի համանախագահ Արտակ Զաքարյանը: Մինչ այս մեկնելու հետ կապված որոշ անհամաձայնություններ են եղել, այնպես որ պատվիրակությունն այսօր եւս մեկնելու հետ կապված քննարկում է ունենալու:

Մ. Խ.

# Թե ինչպես Գուլիեւը զրկվեց 101 միլիոն ֆունտ ստեռլինգից

Ադրբեջանի խորհրդարանի նախկին խոսնակ Ռասուլ Գուլիեւը, որ բնակվում է Միացյալ Նահանգներում, «Ենի Մուսավաթ»-ին տված հարցազրույցում Հեյդար Ալիեւի կառավարման տարիներից շատ հետաքրքրական մանրամասնություններ է պատմել: Ամենաբնորոշը թերեւս արժե վերաշարադրել: Գուլիեւը հիշում է, որ «1993 թ. վերջերին կամ 94-ի սկզբներին» Հեյդար Ալիեւն իրեն ցույց է տվել մի «բանկային հաշիվ» եւ ասել, որ ըստ այդմ Գուլիեւը բրիտանական բանկերից մեկում «100 միլիոն դոլար ունի»:

Երբ Գուլիեւը «մեծ դժվարությամբ, քանի որ տեքստն անգլերեն էր», կարդացել է, պարզվել է, որ խոսքը «101 միլիոն ֆունտ ստեռլինգի մասին է»: Խորհրդարանի նախկին խոսնակը պատմում է, որ ինքը ծիծաղել եւ ասել է, թե «այդ թուղթը բերողը չգիտի, որ ֆունտ ստեռլինգը 1,6 անգամ դոլարից թանկ է, հետեւաբար խոսքը 160 միլիոն դոլարի մասին է», ինչից Ալիեւը խիստ վիրավորվել է եւ բանկային հաշիվը կրկին պահել է իր մոտ՝ ասելով՝ «ես սա հենց այնպես ցույց տվեցի»:

Այդուհանդերձ, Գուլիեւը նամակով դիմել է «Լլոյդ բանկ»-ին եւ բացատրություն խնդրել, թե ինչպե՞ս է նման փաստաթուղթ հայտնվել Ադրբեջանում, երբ ինքը երբեւէ Մեծ Բրիտանիայում գումար չի ունեցել: «Մեկ ամիս անց «Լլոյդ բանկ»-ից ստացվեց պատասխան, որ իրենք նման բանկային հաշիվ չունեն»,- հիշում է Ռասուլ Գուլիեւը: Նա այդ մասին պատմում է՝ հերքելով ներքին գործերի նախկին նախարար Վագիֆ Նովրուզովի կողմից իրեն վերագրված մեղադրանքները:

Իմաստ չունի «դատապաշտպանի» դեր ստանձնել: Ով է արդարացի, ով՝ ոչ, թող ադրբեջանական հասարակությունը պարզի: Մանավանդ որ Գուլիեւը խոստանում է ապրիլին սկսվելիք «հանրային շարժումներին գործուն մասնակցություն բերել»: Էքս-խոսնակի հուշը մեզ համար նրանով է ուշագրավ, որ բնութագրում է Հեյդար Ալիեւի կառավարության կոռումպացվածությունը եւ մատնանշում, թե ինչ բարքեր են իշխում Ադրբեջանում առհասարակ: Հարկ է ավելացնել, որ 1993 թ. Ռասուլ Գուլիեւն զբաղեցրել է փոխվարչապետի պաշտոն, իսկ հետագայում՝ ընտրվել խորհրդարանի խոսնակ: Նրա ստորագրությամբ է Ադրբեջանը վավերացրել զինադադարի մասին Բիշքեկի համաձայնությունը:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունել է Սիրիային վերաբերող հայտարարություն

## *Խոսում են ԱԽ-ում «դիրքերի մերձեցման» մասին*

**ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը երեկ ընդունել է Սիրիային վերաբերող հայտարարություն, որի հիմքում ՄԱԿ-ի եւ Արաբական լիգայի հատուկ դեսպանորդ, Կոֆի Անանի առաջարկություններն են: Ի տարբերություն բանաձեւի, այդ փաստաթուղթը չունի պարտադրանքի իրավաբանական ուժ: Սակայն նկատի ունենալով Ռուսաստանի ու Չինաստանի հետ ԱԽ-ի մյուս անդամների բազմամսյա դիմակայությունը, շատերը փաստաթուղթը համարում են համաշխարհային ընկերակցության նշանակալի դիվանագիտական հաջողություն եւ խոսում են «դիրքերի մերձեցման» մասին:**



Սիրիայի իշխանություններին եւ ընդդիմությանը Կոֆի Անանի հանձնարարած կետերի թվում են ծանր սպառազինության կիրառման արգելումը, քաղաքներից կառավարական զորքերի դուրսբերումը, միջազգային մարդասիրական կազմակերպությունների ներկայացուցիչների մուտքը բախումների շրջաններ: Նաեւ հանձնարարվում է ամեն օր երկու ժամով կրակը դադարեցնել մարդասիրական առաքելությունների անվտանգ աշխատանքի ապահովման նպատակով: Ծրագրի հաջորդ կետերը վերաբերում են լրագրողների ազատ տեղաշարժերի ապահովմանը եւ բնակչության խաղաղ ցույցերի իրավունքի հարգմանը:

ԱԽ-ի հայտարարությունը հրապարակված է կազմակերպության կայքէջում:

Թեեւ փաստաթուղթը լոկ հանձնարարական բնույթ է կրում, ներկայումս Հարավարեւելյան Ասիայում գտնվող ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար **Բան Կի Մունը** հայտարարել է, որ «Անվտանգության խորհուրդը աներկմտորեն պահանջեց դադարեցնել բռնությունները եւ իրավախախտումները» եւ որ ԱԽ-ն հակամարտ կողմերից ակնկալում է պահանջների կատարում:

Հայտարարության միահամուռ ընդունումը ընկալվում է որպես Սիրիայի հարցում Մոսկվայի եւ Պեկինի մոտեցման փոփոխություն: Դրա վկայությունն է նաեւ «Կոմերսանտ» թերթին ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի տված հարցազրույցը, որտեղ նա մասնավորապես ասում է, որ Սիրիայի ներկա իրավիճակը հենց Ասադի բազմաթիվ սխալների հետեւանք է:

Պ. Ք.

# Ընթացիկ

## «Գոլֆ» հիմարության

Այլ կերտ չես վերնագրի ասելիքդ, երբ նյութը ադրբեջանական կողմին է վերաբերում: Բայց առանձնահատուկ է Day.az-ի հրապարակումը: Առիթը հայկական լրատվամիջոցների տեղեկատվությունն է Երեւանի «Ալեն-Էլեն» ակումբում եղած միջադեպի մասին, որի հետեւանքով տուժել են նաեւ Իրանի մի քանի քաղաքացիներ: «Հայաստանում թիրախ են ընտրել Իրանի ադրբեջանցիներին»,- գրել է նշված լրատվամիջոցը:

Ոչինչ, իհարկե, չի ասվում, թե որտեղի՞ց է հայտնի, որ տուժածները Իրանի «ազգությամբ ադրբեջանցի քաղաքացիներ են»: Ի՞նչ կարիք կա, եթե ունեն պատրաստի կաղապար. «էքս-նախագահ Ռոբերտ Քոչարյանն անհամատեղելի է համարել հայերին եւ ադրբեջանցիներին»: Ե՞րբ, որտե՞ղ է Ռոբերտ Քոչարյանը նման միտք հնչեցրել՝ որեւէ հղում չի արվում: Հանձնարարություն տրված է՝ մարդը, որի անունը նույնպես չի հրապարակվում, ընդհատել է Նովրուզի առթիվ Իլհամ Ալիեւից շնորհված արձակուրդը եւ մոգոնել, թե «անկախ նրանք ո՞ր երկրի քաղաքացի են, հայերն ամենուր հետապնդում են ադրբեջանցիներին»: Երեւի այդ «սարսափից» է, որ Բաքուն Ադրբեջան մուտքի արտոնագիր չի տալիս ազգությամբ հայերին՝ որ երկրի քաղաքացի էլ լինեն:

Այստեղ էլ, ըստ էության, ավարտվում է «տրամաբանությունը»: Քանի որ հարց է առաջանում. Ռոբերտ Քոչարյանի «ասածը» միայն Բաքվո՞ւմ են լսել: Եթե Հայաստանի էքս-նախագահը «հայերին եւ ադրբեջանցիներին անհամատեղելի է համարել», այդ մասին պիտի որ բոլոր ադրբեջանցիները իմանային՝ անկախ քաղաքացիությունից: Եվ, ուրեմն, Իրանի՝ ազգությամբ «ադրբեջանցի» քաղաքացիները, ելնելով «անվտանգության նկատառումներից», պետք է զերծ մնային Հայաստան մուտք գործելու գայթակղությունից: Կյանքն, ինչպես ասում են, թանկ է: Իսկ եթե Երեւանի «Ալեն-Էլեն» ակումբում տուժած Իրանի քաղաքացիները իրոք էթնիկ ադրբեջանցիներ են, հետեւաբար այդ մարդիկ չեն զգացել, որ Հայաստանում «բոլոր ադրբեջանցիներին հետապնդում են»: Կամ էլ այդ մարդիկ իրենց ադրբեջանցի չեն համարում:

Ոչ ոք եւ ոչ մի երկիր պատահարներից ապահովագրված չէ: Համանման դեպքեր տեղի են ունենում ամենուր: Այդ թվում եւ ավելի հաճախ՝ Ադրբեջանում: Վերջերս Ղազախում ուկրաինուհին որսորդական հրացանով գնդակահարել էր երկու երիտասարդ ադրբեջանցու, երբ վերջիններս սեփական ոտնձգություն էին կատարել: Նշանակո՞ւմ է սա, արդյոք, որ Ադրբեջանում սլավոնական ծագումով բոլոր կանայք սեփական հետապնդումների թիրախ են: Կարելի՞ է միջադեպից եզրահանգել, որ Ուկրաինան պետք է համապատասխան եզրակացություններ անի՝ նկատի ունենալով, որ ադրբեջանցիներն իրենց հոգեկերտվածքով սեփական բնույթի շեղումներ ունեն: Պատասխանները թողնենք ադրբեջանական կողմին:

Ակնհայտ է, որ իրանա-ադրբեջանական հարաբերությունների անշեղ վատթարացման ֆոնին Բաքվում «մոմը ձեռքներին հակասություններ են փնտրում» հայ-իրանական միջպետական եւ հանրային մակարդակի շփումներում: «Ալեն- Էլեն» ակումբի պատահարը Բաքվի քարոզչամեքենայի համար ուղղակի «գտածո» էր: Մանավանդ այն դեպքում, երբ, ինչպես վիճակագրությունն է վկայում, Նովրուզի տոնակատարության օրերին Իրանից Հայաստան են այցելում մի քանի տասնյակ հազար զբոսաշրջիկներ:

Խնդիր է դրված աղտոտել այդ իրոք բարեկամական հարաբերությունները, խոչընդոտել Իրան-Հայաստան միջպետական կապերին: Բայց մի՞թե այդքան անգրագետ հարձակումներն են ադրբեջանական հատուկ ծառայությունների եւ դրանց խոսափող լրատվամիջոցների մակարդակը: Տվյալ դեպքում դա այդպես է, ուստի մեզ մնում է եւս մի անգամ գովել հարեւան երկրի պետական մարմինների հիմարությունները եւ նրանց հետագա հաջողություններ մաղթել: Առանց ենթատեքստի եւ չակերտների:

**Վ. Ա.**

**ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

## Ե՞րբ են սփյուռքահայերի բողոքներին լրջորեն անդրադառնալու

**«Ազգը» պարբերաբար անդրադառնում է 81-ամյա սփյուռքահայ Ժորժ Թոմասյանի գործին, որը շուրջ 11 ամիս մեր դատական տարբեր ատյաններում անհասկանալի պատճառներով ձգձգվում է, ու անօրինական որոշումներ են կայացվում: Մարտի 20-ին Վերաքննիչ քրեական դատարանում դատավոր Արարատ Պետրոսյանի գլխավորությամբ**



**վերսկսված վերաքննիչ բողոքի քննությունը հետաձգվեց: Դատախազ Արսեն Բեգինյանը դատարանից խնդրեց ժամանակ՝ գործում առկա նյութերին ծանոթանալու համար, քանի որ վերջինս չէր կարողանում դատավորի հարցերին պատասխանել... նյութերին ծանոթ չլինելու պատճառով: «Ազգը» այդ դատական նիստը լուսաբանել է: Երեկ վերսկսվեց ընդհատված նիստը, որին դատախազ Արսեն Բեգինյանը չէր ներկայացել՝ առանց պատճառաբանման: Դատավոր Ա. Պետրոսյանը որոշում կայացրեց նիստը շարունակել առանց դատախազի ներկայության: Դատարանն այս անգամ էլ մերժեց Ժ. Թոմասյանի ու նրա ներկայացուցիչների բերած բողոքը եւ օրինական ուժի մեջ թողեց առաջին ատյանի դատարանի այդպես էլ չպատճառաբանված որոշումը: Ժ. Թոմասյանի շահերի պաշտպան Սամվել Զաղինյանը «Ազգին» ասաց. «Որոշումը երբ կստանանք ու կտեսնենք, թե ի՞նչ պատճառաբանություն է ներկայացրել դատավորը՝ մերժելով հայցը, ըստ դրա էլ կդիմենք Վճռաբեկ դատարան, իսկ հետո մեր իրավունքները կփորձենք պաշտպանել միջազգային ատյաններում»:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## Անապահով խավի գազի համար փոխհատուցված գումարը փոխանցվեց «Հայռուսգազարդին»

**Հայաստանի կառավարությունը «Հայռուսգազարդին» 204 մլն 872 հազար դրամ փոխանցեց որպես անապահով ընտանիքների կողմից 2011-ի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին սպառված բնական գազի համար մասնակի փոխհատուցման գումարի վճարում: «Այս գործառույթը, որի նպատակն է սոցիալապես խոցելի խավերին օժանդակություն ցուցաբերել պետության կողմից, որպեսզի նրանց համար ավելի էժան գնով գազ մատակարարենք, շարունակական բնույթ է կրելու: Մինչեւ 300 խմ-ի համար պետությունն այդ ընտանիքներին օգնություն է ցուցաբերում, եւ նրանց համար գործում է 100 դրամ սակագինը, ոչ թե 132-ը, ինչպես մյուս բոլոր քաղաքացիների համար: Սա արդեն իր դրական ազդեցությունը թողել է. մեր քաղաքացիները, ովքեր համարվում են գազի սպառող, իրենց ընտանեկան բյուջեներում տնտեսում ունեն», այս առթիվ նշեց վարչապետ Տիգրան Սարգսյանը:**

**Ա. Մ.**

## Հոգեկան առողջությունը ֆիզիկական ու բարոյական բարեկեցությունն է

Ինքնասպանությունների հետեւանքով աշխարհում տարեկան ավելի շատ մարդ է մահանում, քան պատերազմների, բնական աղետների ու դժբախտ պատահարների ժամանակ:

Հայկական հոգեբուժական ասոցիացիայի նախագահ **Արմեն Սողոյանը** նշում է, որ յուրաքանչյուր 40 վայրկյանը մեկ աշխարհում մեկ ինքնասպանություն է լինում, իսկ ինքնասպանության դիմողների 60 տոկոսից ավելին ունի հոգեկան որոշակի խնդիրներ:

Երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ Արմեն Սողոյանը նաեւ նշեց, որ հոգեկան առողջություն ասելով չպետք է հասկանալ միայն հոգեբանական շեղումները, հոգեկան առողջությունը ֆիզիկական, բարոյական բարեկեցությունն է:

Ըստ Արմեն Սողոյանի՝ հոգեկան առողջության հանդեպ անուշադրությունն առաջին հերթին կարող է դառնալ անաշխատունակության պատճառ եւ լուրջ ազդեցություն թողնել պետության վրա:

**Ի. Պ.**

## Դատավորն ինքնաբացարկ հայտնեց

Երեւանի Շենգավիթ համայնքի ընդհանուր իրավասության դատարանում Նարեկ Հարությունյանի քրեական գործը քննող դատավոր Նելլի Բաղդասարյանը բավարարել է Հարությունյանի փաստաբան Հայկ Ալումյանի՝ ինքնաբացարկ հայտնելու միջնորդությունն ու ընդմիջում հայտարարելուց հետո ինքնաբացարկ հայտարարել:

Հիշեցնենք, որ փաստաբանը կասկածի տակ էր դրել դատավորի անաչառությունը: Դատավորը բարեկամական եւ ընկերական հարաբերությունների մեջ էր մեղադրող կողմի հետ:

**Հ. Հ.**

## Եվս մեկ ներդրումային ծրագրի համար ԱԱՀ-ն հետաձգվեց

**«Արարատ սննդի կոմբինատի» կողմից իրականացվող ներդրումային ծրագրով, 2011-ի նոյեմբերի 1-ից մինչեւ 2012-ի դեկտեմբերի 30-ը ներառյալ ներմուծվող 300 մլն դրամը գերազանցող արժեքով ապրանքների ԱԱՀ վճարման ժամկետը հետաձգել է մինչեւ 2014-ի նոյեմբերի 1-ը: Այդ մասին երեկ որոշում ընդունեց Հայաստանի կառավարությունը: Ընկերությունը 2010-ին հիմնել է եվրոպական արտադրության ժամանակակից սարքավորումներով հագեցած բնական հյութի արտադրության գործարան՝ ներդնելով ավելի քան 2 մլրդ դրամ: Նախատեսված 40-ի փոխարեն ստեղծվել է մոտ 70 աշխատատեղ: Ընկերությունը ծրագրում է ընդլայնել իր գործունեությունը՝ հիմնելով ապակյա տարայով բնական հյութի եւ նեկտարի, խոտաբույսի, հատապտղի եւ թեյի փաթեթավորման, ինչպես նաեւ գազավորված ըմպելիքի արտադրություն, իրականացնել մոտ 1,59 մլրդ դրամի ներդրում, ստեղծել 70-80 աշխատատեղ՝ 110 հազար դրամ միջին աշխատավարձով: Հարցի առնչությամբ վարչապետ Տիգրան Սարգսյանն ասաց. «Սա այն ձեռնարկությունն էր, որն արձագանքեց կառավարության առաջարկին: Հիշում եք՝ երեք տարի առաջ մենք դիմեցինք ներմուծմամբ զբաղվող մեր տնտեսվարող սուբյեկտներին, որ եթե նրանք իրենց ներմուծվող ապրանքը փոխարինեն հայկական արտադրանքով, կստանան կառավարության օժանդակությունը: Սրանք այն ձեռներեցներն են, ովքեր հավատացին մեզ եւ ներդրումային ծրագիր ներկայացրին: Այդ ներդրումային ծրագիրը մենք հավանության արժանացրինք, եւ իրականացվեցին ներդրումներ: Սա լավ օրինակ է մնացած ներմուծողների համար, որ ներկայացնեն նման ներդրումային ծրագրեր եւ կառավարության կողմից արտոնություն ստանան: Միեւնույն ժամանակ մենք բոլոր այն ձեռնարկություններին, որոնց տվել ենք արտոնություն, մշտապես պահում ենք մեր ուշադրության կենտրոնում եւ պարոն Դավթյանի հետ ստուգայցեր ենք կազմակերպում: Արդեն կա 14 այդպիսի ձեռնարկություն: Բոլոր օրինակները ներկայացնում ենք նաեւ հանրության դատին՝ ինչպիսին էր իրավիճակը երեք տարի առաջ, ինչպիսի արտահանման մեծ պոտենցիալ է ձեւավորվում ներդրումային ծրագրեր իրականացնելուց հետո»:**

**Ա. Մ.**

## Ո՞ւմ են ասում՝ խաղաղության ...

*1-ին էջից*

Քլինթոնը, Լավրովն ու Ժյուպեն «առաջնորդներին» կոչ են արել «հնարավորինս շուտ» ավարտել շրջանակային համաձայնագրի ու հետագա վերջնական կարգավորման ուղղությամբ տարվող աշխատանքը՝ հիմնված Հելսինկյան եզրափակիչ ակտի՝ ուժի կամ դրա սպառնալիքի չկիրառման, տարածքային ամբողջականության եւ ինքնորոշման ու ժողովուրդների հավասար իրավունքների սկզբունքների վրա, ինչպես նաեւ հիմնված ՄԱԿ-ի կանոնադրության ու միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների վրա, որոնք «ողջ տարածաշրջանին հնարավորություն կտան ստատուս քվոյից անցնել առավել անվտանգ ու բարգավաճ ապագայի»:

Արտգործնախարարները նաեւ հիշեցրել են դովիլյան հայտարարությունը, ընդգծելով, որ «միայն բանակցված կարգավորումը կարող է հանգեցնել խաղաղության, կայունության եւ համերաշխության, իսկ հակամարտությունը ուժի կիրառմամբ լուծելու ամեն փորձ ավելի շատ տառապանք կբերի տարածաշրջանին, որ անկայուն ու անապահով է չափազանց երկար ժամանակ»:

«Տարածաշրջանի ժողովուրդներն առավել տառապել են պատերազմի հետեւանքներից, իսկ կարգավորման հասնելու հետաձգումը միայն կերկարաձգի նրանց զրկանքները», շեշտել են արտգործնախարարները, հավելմամբ, որ հայերի ու ադրբեջանցիների նոր սերունդ է արդեն մեծացել, որ կողք կողքի ապրելու ու միմյանց հետ կապված հիշողություններ չունի:

Համանախագահող երկրների ներկայացուցիչները կրկին կոչ են հղել, կրկին առանց կոնկրետ հասցեատիրոջ, մինչդեռ, ինչպես ասում են, դա արդեն ուղղակի պահանջված է. «Այս արհեստական բաժանումների երկարաձգումը կխորացնի պատերազմի վերքերը: Այդ իսկ պատճառով մենք կոչ ենք անում կողմերի լիդերներին՝ իրենց ազգաբնակչությանը նախապատրաստել խաղաղության, այլ ոչ պատերազմի»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱւԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Խորհրդարանական ընտրություններում կհաղթի ԲՀԿ-ն, նախագահական ընտրություններում՝ Սերժ Սարգսյանը»

«Հայաստանի Եվրոպացի բարեկամներ» (ՀԵԲ) կազմակերպությունը նախընտրական պատկերը Հայաստանում պարզելու նպատակով փետրվարի 29-ից մարտի 5-ը հարցում է անցկացրել: Հարցազրույցին մասնակցել է 1602 քաղաքացի, ովքեր ընթացակարգով են ընտրվել: Հետազոտության արդյունքները երեկ ներկայացրեց կազմակերպության գլխավոր քարտուղար **Մայքլ Քամբեքը**՝ հավաստիացնելով, որ այն անկախ է եւ համապատասխանում է միջազգային չափորոշիչներին:

2010-ի հոկտեմբերին նույն կազմակերպությունը կրկին սոցիոլոգիական հարցում էր անցկացրել Հայաստանում: Զուգահեռներ անցկացնելով նախորդ հետազոտության արդյունքների հետ, պարզվել է, որ երկու տարվա ընթացքում ոչ միայն կուսակցությունների մասին տեղեկացվածությունն է աճել, այլեւ կոնկրետ քաղաքական գործիչների: Համաձայն հարցման արդյունքների՝ հասարակության շրջանում տեղեկացվածության առումով ԲՀԿ-ն առաջին հորիզոնականում է, ՀՀԿ-ն՝ երկրորդ: Եթե 2 տարի առաջ ամենահայտնի քաղաքական գործիչը Սերժ Սարգսյանն էր, այսօր նա զիջել է դիրքերը. առաջատարը Ծառուկյանն է: Նրա առաջատար լինելը պայմանավորված է հանգամանքով, որ ԲՀԿ-ն ժողովրդականություն է վայելում, մինչդեռ երբ հերթը հասնի նախագահական ընտրություններին, ապա հասարակությունը նախապատվություն կտա Սերժ Սարգսյանին: Հետազոտության արդյունքներով աճել են ՀՀԿ եւ ՀՅԴ կուսակցությունների վարկանիշները:

Ընտրություններին մասնակցելու պատրաստակամություն է հայտնել հարցվածների 64 տոկոսը: Հարցին՝ «Եթե ընտրությունները լինեին այս կիրակի, ո՞ր կուսակցությանը կընտրեիք», հարցվածների գերակշիռ մասը՝ 41 տոկոսը, նախապատվությունը տվել է ԲՀԿ-ին, 37 տոկոսը՝ ՀՀԿ-ին: Քամբեքը շեշտում է, որ վերոնշյալ երկու կուսակցություններն առաջատար են: ՀԱԿ-ն ու Դաշնակցությունը կհավաքեն 5, «Ժառանգությունը»՝ 4 տոկոս: Քամբեքը փաստում է, որ ուսումնասիրության ժամանակ հանդիպել են անորոշության շատ մեծ տոկոսի, հետեւաբար դժվարանում են միանշանակ ասել, թե բացի ՀՀԿ-ից եւ ԲՀԿ-ից որ կուսակցությունները կմտնեն խորհրդարան:

Ըստ Մայքլ Քամբեքի՝ ՀՀԿ ընտրազանգվածի 2/3-ը 2007-ին ՀՀԿ-ի օգտին քվեարկածներն են: ԲՀԿ-ի ընտրազանգվածի գերակշիռ մասը հավաքվել է վերջին 5 տարվա ընթացքում: «Մարդիկ հավատում են, որ Հայաստանի առջեւ ծառացած խնդիրները՝ ղարաբաղյան հակամարտություն, գործազրկություն, աղքատություն, կրթական եւ առողջապահական համակարգի հարցերը, կարող են լուծել ԲՀԿ-ն եւ ՀՀԿ-ն:

Համաձայն հետազոտության արդյունքների՝ եթե նախագահական ընտրություններն անցկացվեին այս կիրակի, կհաղթեր Սերժ Սարգսյանը: Եթե 2 տարի առաջ Սարգսյանի վարկանիշը 27 տոկոս էր, այս անգամ աճել է՝ կազմելով 33 տոկոս:

Եթե Սերժ Սարգսյանն ընկալվում է որպես 100-տոկոսանոց փորձառու քաղաքական գործիչ, ապա Ծառուկյանին այդպիսին բնութագրում է հարցվածների 77 տոկոսը, մինչդեռ որպես վստահելի քաղաքական գործիչ Ծառուկյանը առաջ է անցնում Սարգսյանից՝ 87 տոկոս –71 տոկոս հարաբերակցությամբ: Հետազոտության հեղինակները փորձել են նաեւ պարզել, թե 5 տարվա ընթացքում երկրում ինչպիսի փոփոխություններ են գրանցվել: 24 տոկոսի կարծիքով իրավիճակը զգալիորեն վատացել է, 20 տոկոսի կարծիքով՝ մասամբ վատացել է, 42 տոկոսի գնահատմամբ՝ մասամբ լավացել: 8 տոկոսը կարծում է, որ կյանքը Հայաստանում զգալիորեն է լավացել, իսկ 6 տոկոսը համոզված է, որ ոչինչ չի փոխվել:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## «Գործընկերություն հանուն սոցիալական բնակարանների» թեմայով միջազգային համաժողով Երեւանում



Երեկ Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիայի կազմակերպած «Գործընկերություն հանուն սոցիալական բնակարանների» թեմայով միջազգային համաժողովի բացման խոսքում ԱԱԽ քարտուղար, Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիայի հոգեբարձուների խորհրդի նախագահ **Արթուր Բաղդասարյանն** ասել է. «Սոցիալական բնակարանային շինարարության գործընթացը շատ կարեւոր նշանակություն ունի ոչ միայն Հայաստանում, այլեւ աշխարհի շատ երկրներում: ԱՍԲԱ հիմնադրամը Հայաստանում, կարելի է ասել, վստահորեն կատարում է առաջընթացի քայլեր: Մենք արդեն հոլանդացի մեր գործընկերների հետ ունենք լուրջ ձեռքբերումներ այս ոլորտում եւ մտադիր ենք առաջիկա մեկ-երկու ամիսների ընթացքում մեկնարկել առաջին սոցիալական բնակարանների կառուցումը՝ սկսելով Տավուշի մարզի Դիլիջան քաղաքից: Այնուհետեւ այս ծրագիրը կներառի Հրազդան, Վանաձոր, Աշտարակ, Վեդի, Ապարան եւ այլ քաղաքներ: ԱՍԲԱ-ի հիմնական առաքելությունն է լինելու այս խնդիրը մշտապես բարձրացնել մեր պետական մարմինների առջեւ, առաջարկել նոր լուծումներ, որոնցով հնարավորություն կտրվի սոցիալական բնակարանային ֆոնդի զարգացման գործընթացը հետզհետե ընդլայնել: Այսօր արդյունավետ համագործակցություն կա եվրոպական տարբեր երկրների սոցիալական բնակարանային ասոցիացիաների հետ, եւ ես կարծում եմ, որ ԱՍԲԱ-ն կկարողանա Հայաստանում լուրջ քայլեր իրականացնել, եւ մենք կարող ենք սոցիալապես անապահով խավերի համար ապահովել մատչելի բնակարաններ եւ մատչելի սոցիալական վարձակալություն: ՀՀ-ԵՄ քաղաքական համագործակցության 2012-2013 թթ. ծրագրում ներառված են Հայաստանում ազգային սոցիալական բնակարանային շինարարության ռազմավարության մշակումը եւ ընդունումը: Նման ռազմավարության ընդունումը հնարավորություն կտա ավելի մեծ ուշադրություն դարձնել սոցիալական անապահով խավերի բնակարանային ապահովության խնդրին, սոցիալական վարձակալության զարգացմանը, ինչպես նաեւ այս ռազմավարության ընդունումը եւ դրան հետեւող օրենսդրական եւ ենթաօրենսդրական ակտերի մշակումը կարեւոր նշանակություն կունենան Հայաստանում այս ոլորտը զարգացնելու համար:

Որպես կարեւորագույն ձեռքբերում Արթուր Բաղդասարյանն ընդգծել է, որ ԱՍԲԱ-ն անդամակցել է ՍԵԿՈԴԱՍ միության՝ Եվրոպական միության բնակարանային ասոցիացիային, ինչը հնարավորություն կտա խորացնել միջազգային կապերը եւ խթանել համագործակցությունը ոլորտում լուրջ փորձ ունեցող երկրների՝ Հոլանդիայի, Ֆրանսիայի, Շվեդիայի եւ այլ երկրների հետ:

Արթուր Բաղդասարյանը նշել է, որ ԱՍԲԱ-ի կարեւորագույն առաքելությունը Հայաստանում սոցիալապես անապահով ընտանիքների համար մատչելի սոցիալական վարձակալության, ինչպես նաեւ արտոնյալ պայմաններով բնակարաններ ձեռք բերելու հնարավորության ապահովումն է եւ համոզմունք հայտնել, որ հիմնադրամի ծրագրերը հաջողություն են ունենալու, քանի որ առկա են անհրաժեշտ մեկնարկային պայմանները՝ պետական աջակցություն, ֆինանսական միջոցներ եւ միջազգային օժանդակություն:

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

## ՀԱԿ-ի ցուցակը

ՀԱԿ-ի համամասնական ցուցակը, որ երեկ ներկայացվեց ԿԸՀ, պարունակում է 119 հոգի: Երեւում է՝ ՀԱԿ-ականները ներդաշինքային խմորումներից ազատվելու համար վերջին պահին են ցուցակ հրապարակել, բայց արդյո՞ք ՀԱԿ-ին կհաջողվի խաղաղեցնել նեղացողներին: Համենայն դեպս՝ անցողիկ համարվող առաջին տասնյակն ու երկրորդ տասնյակը ներկայացնում ենք:

1. Տեր-Պետրոսյան Լեւոն Հակոբի (Հայոց համազգային շարժում)
2. Դեմիրճյան Ստեփան Կարենի (Հայաստանի Ժողովրդական կուսակցություն)
3. Սարգսյան Արամ Զավենի («Հանրապետություն»)
4. Մանուկյան Արամ Վիգենի (Հայոց համազգային շարժում)
5. Զուրաբյան Լեւոն Արամի (անկուսակցական)
6. Սարգսյան Լյուդմիլա Նարիմանովի (Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն)
7. Փաշինյան Նիկոլ Վովայի (անկուսակցական)
8. Բագրատյան Հրանտ Արարատի («Ազատություն» կուսակցության նախագահ)
9. Զիանգիրյան Գագիկ Վրեժի (անկուսակցական)
10. Սուքիասյան Խաչատուր Ալբերտի (անկուսակցական)
11. Պետրոսյան Վիոլետա Մուշեղի (անկուսակցական)
12. Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի (անկուսակցական)
13. Միքայելյան Սասուն Մեխակի (անկուսակցական)
14. Մալխասյան Մյասնիկ Ժորայի (անկուսակցական)
15. Մինասյան Ստեփան Երվանդի (Հայաստանի Ժողովրդական կուսակցություն)
16. Թադեւոսյան Զոյա Աղվանի (անկուսակցական)
17. Մաթեւոսյան Դավիթ Ղեւոնդի (անկուսակցական)
18. Մակեյան Պետրոս Ստեփանի («Ժողովրդավարական հայրենիք»)
19. Խաչատրյան Վահագն Գառնիկի (անկուսակցական)
20. Հովհաննիսյան Հովհաննես Սերգեյի (Հայաստանի լիբերալ կուսակցություն)

Ս. Խ.

## Թիվ 11 ԸԸՀ-ն չի գրանցում Էդուարդ Մաղաքյանին

Թիվ 11 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու առաջադրված Էդուարդ Մաղաքյանին (Խունձոն Էդո մականունով) չի գրանցում, քանի որ նա վերջին 5 տարին Հայաստանում անընդմեջ չի բնակվել:

Ս. Խ.

ԳՅՈՒՄՐԻ

## Լրագրողներին՝ միգրացիայի ոլորտում պետության գործառույթների մասին

Չեխական «Փիփըլ ին նիդ» («Մարդիկ կարիքի մեջ») կազմակերպությունը Եվրոմիության խորհրդատվական խմբի եւ Հայաստանի պետական միգրացիոն ծառայության հետ համագործակցված իրականացնում է սեմինարների շարք մարզային լրագրողների համար, նպատակ ունենալով վերջիններիս ծանոթացնել միգրացիոն դաշտում պետության գործառույթներին, այդ ոլորտում ԵՄ եւ այլ երկրների հետ գործակցության քայլերին: Շարքի առաջին հանդիպումը կայացել է ընթացիկ տարվա փետրվարի վերջին Հրազդանում, իսկ երկրորդը տեղի ունեցավ Գյումրիում:

Հանդիպման բանախոսը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության պետական միգրացիոն ծառայության բաժնի պետ **Հայկանուշ Չոբանյանը**, նախ անդրադարձավ տարբեր երկրների հետ այսպես կոչված ռեադմիսիոն համաձայնագրերի կնքման գործընթացին: Ռեադմիսիա՝ նշանակում է հետընդունում: Եթե մեր քաղաքացիները գնում են որեւէ երկիր, այնտեղ ապրում են անօրինական կարգավիճակում, նրանք վաղ թե ուշ պետք է վերադարձվեն: Ի դեպ, վերադառնալը նաեւ քաղաքացու իրավունքն է: Եվ մեր պետության խնդիրն է ընդունող երկրի տարածքում անօրինական գտնվող մեր քաղաքացիներին հետ ընդունելը: Կողմերի միջեւ այդ գործընթացի համաձայնեցման ու իրավաքաղաքական կարգավորման համար ստորագրվում են հետընդունման համաձայնագրեր: 2003 թվականից առ այսօր Հայաստանի Հանրապետության կառավարությունը 10 նման համաձայնագրեր է ստորագրել 11 պետությունների, այդ թվում՝ 10 եվրոպական երկրների եւ 1-ը՝ Ռուսաստանի հետ, եւս հինգ երկրների ու Եվրոմիության հետ այդ ուղղությամբ բանակցություններ են ընթանում:

Միգրացիոն ծառայության ներկայացուցիչը խոսեց նաեւ վերադարձից հետո վերաինտեգրմանն աջակցության իրականացվող ծրագրերի, Եվրոպական հարեւանության քաղաքականության եւ «Արեւելյան գործընկերություն» նախաձեռնության շրջանակում հաստատված համագործակցության, անցյալ տարվա վերջին Հայաստանի եւ Եվրոմիության միջեւ ստորագրված «Շարժունակության շուրջը գործընկերության» հռչակագրի, շենգենյան գոտի մուտք գործելու արտոնագրերի դյուրացման հետ կապված Հայաստան-ԵՄ բանակցությունների եւ այլ հարցերի մասին, պարզաբանումներ տվեց դրանց բովանդակության վերաբերյալ:

Լրագրողներին առավել հետաքրքրում էր բնակչության տեղաշարժերի, եւ առաջին հերթին՝ արտագաղթի վիճակագրությունը, որի հիման վրա էլ, թվում է, պետությունը պետք է կառուցի իր միգրացիոն քաղաքականությունը: Այս մասին հարցերին ծառայության արտաքին կապերի բաժնի պետը պատասխանեց, որ իրենք նման ստույգ վիճակագրություն չունեն, բայց հաճախ հենվում են տարբեր աղբյուրների, այդ թվում՝ վիճակագրական ծառայության տրամադրած տեղեկությունների, այլ կազմակերպությունների հետազոտությունների տվյալների վրա: Ստույգ վիճակագրություն ստանալը, նշեց Հայկանուշ Չոբանյանը, ընդհանրապես շատ դժվար է, իսկ Հայաստանում այդ մեխանիզմն էլ դեռ չկա: Բայց, իր հավաստմամբ, նման հարցերին պետության վերաբերմունքը փոխվում է: Եվ ոլորտում պատկերը ավելի լավ հասկանալու համար այս տարի էլ պետական ու մի շարք միջազգային կազմակերպությունների աջակցությամբ հետազոտություններ արվելու են:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
Գյումրի

## Տարաբնույթ

# Դեւիդ Փիլիպս. «Դիվանագիտական պատմություն. Հայաստան-Թուրքիա արձանագրությունները»

*(հատվածներ)*

***Կոլումբիայի համալսարանի (ԱՄՆ) Մարդու իրավունքների ուսումնասիրության ինստիտուտի իրավունքների եւ խաղաղաշինության ծրագրի տնօրեն, ամերիկացի փորձառու դիվանագետ-փորձագետ, Հայաստան-Թուրքիա հաշտեցման հանձնաժողովի (TARC) նախաձեռնող Դեւիդ Ֆիլիպսը հրապարակել է իր երկրորդ մենագրությունը նվիրված հայ-թուրքական հաշտեցման պատմությանը:***

«Դիվանագիտական պատմություն. Հայաստան-Թուրքիա արձանագրությունները» վերնագրված 130-էջանոց զեկույցը հրատարակել է Հարվարդի համալսարանը: Զեկույցը հիմնված է հայ, թուրք եւ շվեյցարացի պաշտոնյաների հետ հեղինակի անցկացրած բացառիկ հարցազրույցների վրա:

Թարգմանաբար ներկայացնում ենք այդ զեկույցից կրճատ հատվածներ:

«Երբ Հայաստանը սպառնաց բոյկոտել 1999 թ. ԵԱՀԿ Ստամբուլի գագաթաժողովը, ԱՄՆ պաշտոնյաները մոտեցան Հայաստանի եւ Թուրքիայի կառավարություններին՝ երկխոսություն սկսելու նպատակադրումով: Թուրք պաշտոնյաները հրապարակայնորեն պնդեցին, որ ստիպողաբար չեն բանակցելու, չնայած «փակ դռների» հետեւում Ունալ Չեւիքոզի եւ Դավիթ Հովհաննիսյանի միջեւ ընթացող հանդիպումներին: Քննարկել հայկական հարցերը նշանակում էր անդրադառնալ Հայոց ցեղասպանությանը, եւ Անկարան մերժեց դրանից բխող տարածքային կամ ֆինանսական պահանջները: (Նախագահ) Քոչարյանը փորձեց հանդարտեցնել այդ մտավախությունները՝ (թուրք հայտնի լրագրող) Մեհմեդ Ալի Բիրանդի հետ հարցազրույցում հայտարարելով, թե «Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչումը չի բերի տարածքային պահանջների համար իրավական հետեւանքների»: (էջ 16)

«Միացյալ պատմական հանձնաժողովի միտքը առաջին անգամ ի հայտ եկավ 1998-ին: Հայ-թուրքական գործարարության զարգացման խորհրդի (համանախագահ) Քահան Սոյաքը գրել էր այն ժամանակվա (Թուրքիայի) նախագահ Սուլեյման Դեմիրելին»: (էջ 21)

(2005-ին նախագահ Քոչարյանին ուղարկած նամակով) Էրդողանը ցանկանում էր անդրադառնալ Հայկական հարցին եւ սպառել այն մեկընդմիշտ: Նա ոչ միայն ակնկալում էր, որ հանձնաժողովը կմերժի ցեղասպանությունը, այլեւ ցանկանում էր խոչընդոտել ցեղասպանության (միջազգային) ճանաչմանը՝ ցույց տալով, որ թուրքերը եւ հայերը խոսում են իրար հետ»: (էջ 21)

«Էրդողանը եւ Քոչարյանը տարբեր մոտեցումներ ունեին (իրադարձությունների) հերթականության վերաբերյալ: Էրդողանը ցանկանում էր քննել պատմական հարցերը եւ հետո՝ հայ-թուրքական հարաբերություններին վերաբերող մնացած խնդիրները, իսկ նախագահ Քոչարյանը 2005 թ. ապրիլի 25-ին ուղարկված պատասխան նամակում նշել էր. «Մենք առաջարկել էինք եւ առաջարկում ենք նորից մեր երկու երկրների միջեւ նորմալ հարաբերություններ հաստատել առանց նախապայմանների»: (էջ 24)

Այն ժամանակ (2005 թ.) պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանին Վաշինգտոնի Մամուլի ազգային ակումբում հարցրեցին՝ միացյալ պատմական հանձնաժողովը կարո՞ղ է քննել ցեղասպանության հարցը: Նա պատասխանեց, որ (հարցի մասին) Անցումային արդարադատության միջազգային դատարանի (ICTJ) կողմից Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի առաջարկով տրված իրավական կարծիքը արդեն լուծել է տերմինաբանության խնդիրը (ICTJ-ն նշել էր, որ 1915 թ. իրադարձությունները ամբողջությամբ համապատասխանում են 1948 թ. Ցեղասպանության կանխարգելման կոնվենցիայի բնորոշումներին եւ հանդիսանում են ցեղասպանություն: Նա կասկածներ հայտնեց՝ արդյո՞ք Թուրքիան պատրաստվում է հանձնաժողովներ առաջարկել մինչեւ դրանցից մեկը չարտահայտի Անկարայի դիրքորոշումը»: (էջ 24)

«(2005-ին) հայ դիվանագետները մի պարզ տեքստ առաջարկեցին ճանաչման եւ հարաբերությունների կարգավորման վերաբերյալ, ինչը նման էր 2009-ի արձանագրությունների տեքստին...» (էջ 25) (2007-ի սեպտեմբերին) Օսկանյանը առաջարկեց, որ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ երկկողմ հարաբերությունների կարգավորումը ընթանա պատմական հանձնաժողովի աշխատանքներին զուգահեռ»: (էջ 28)

«(Նախագահ) Սարգսյանը եւ (նախարար) Նալբանդյանը որակապես տարբեր էին իրենց նախորդներից: Եթե Հայաստանի շահերի առաջխաղացման տեսանկյունից Քոչարյանը եւ Օսկանյանը արձագանքող էին, Սարգսյանն ու Նալբանդյանը՝ ավելի կոփված եւ ռազմավարական (մտածելակերպով): Նրանք ավելի բարձր մակարդակի հասցրեցին հայկական դիվանագիտությունը, հարցը դնելով մեծ տերությունների օրակարգի մեջ»: (էջ 42)

«(Թուրքիայի նախագահ) Գյուլի արարողակարգի ղեկավար Շեւքի Մյութեվելլիօղլուն նույնպես այցելեց Հայաստան (2008 թ. սեպտեմբերին)՝ հայ պաշտոնյաների եւ դաշնակցների ներկայացուցիչների հետ քննարկումների: Նրանք բանակցեցին (Գյուլի Երեւան այցի առթիվ) ցույցերի ծավալների եւ գտնվելու վայրերի շուրջը, ինչպես նաեւ բաներների ու ցուցանակների տեքստը: Նրանք համաձայնեցին, որ ցուցարարները կարող են քննադատել Թուրքիայի կողմից ցեղասպանության ժխտումը, բայց այդ ցուցանակները չպետք է անձնապես քննադատեին Գյուլին»: (էջ 42)

«(Թուրքիայի ԱԳ նախարար) Դավութօղլուն եւ այլ թուրք պաշտոնյաներ, ովքեր ներգրավված էին գործընթացում, զարմացել էին բոլոր «գրավյալ տարածքներից» հայկական ուժերի ամբողջական դուրսբերման մասին Էրդողանի պահանջից (2009 թ. մայիսի 12-13-ին վարչապետ Էրդողանը այցելել էր Բաքու)»: Էրդողանը ոչ միայն շատ էմոցիոնալ էր մայիսի 12-ի մամլո ասուլիսի ժամանակ, այլեւ մայիսի 13-ի իր ելույթում ներառել էր մեկնաբանություններ, որոնք «տեղ չէին գտել վարչապետի գրասենյակ ԱԳՆ-ից ուղարկված զեկույցների մեջ»... Հայ պաշտոնյաները զարմացած չէին. (նախագահ) Սարգսյանը ապրիլի 22-ի խոսակցության ժամանակ ասել էր (ԱՄՆ փոխնախագահ) Բայդենին, որ Թուրքիան կարող է հետ կանգնել պայմանավորվածություններից: Նրանք (հայերը) երբեք չէին մտածել, որ Անկարան մինչեւ վերջ լուրջ է տրամադրված կարգավորման գործընթացի վերաբերյալ: (էջ 50) «Էրդողանի՝ Բաքու այցելությունը ցույց տվեց Աբդուլլա Գյուլի հետ նրանց (մոտեցումների) տարբերությունը»: (էջ 51)

Պնդելով, որ «պատմական հնարավորությունը բաց թողնվեց արձանագրությունների վավերացման մերժմամբ», ամերիկացի դիվանագետը ավարտում է իր մենագրությունը, նաեւ առաջարկելով առաջ շարժվելու համար որոշ քայլեր եւ ռազմավարություն:

# Երուանդ Պապայեանը զոր ճանչցայ

*Հարիւրամեակի սեմին*

Եգիպտոսի մեր պաշտօնաթերթ «Արեւ»ին լման տասը տարի (1948-1958) խմբագրութիւնս յաճախ կը յիշուի. ինչ որ սակայն գրեթէ երբեք չի յիշուիր այն իրողութիւնն է, որ նախապէս ալ պաշտօնավարած իմ այդ օրաթերթին մէջ իբրեւ օգնական խմբագիր, Վահան Թէքէեանի խմբագրապետութեան օրերուն, թուականէս շուրջ եօթանասուն տարի առաջ: Այդ ժամանակ, մենք ունեինք համակրելի ժպտերես պաշտօնեայ մը, զոր ամէն օր կը տեսնէինք: Թէքէեանը, սակայն, հասկնալի առողջական պատճառներով առժամապէս կը բնակէր Հելուան, Գահիրէէն քիչ հեռու կազդուրման վայր մը, ամէն օր չէր կրնար գալ. կու գար կէսօրուան դէմ խմբագրական գրելու եւ շուտով կը մեկնէր: Այսօր, այդ համակրելի պաշտօնեան գրեթէ ոչ ոք կը յիշէ, մինչդեռ քիչ երեւցող Թէքէեանի անունը ծանօթ է ու սիրուած ամէն տեղ, ուր հայութիւն կ՚ապրի:

Նոյնն է պարագան մեր բազմավաստակ դաստիարակ Երուանդ Պապայեանին, որմէ գրեթէ միշտ հեռու ապրած եմ եւ իրեն աշակերտելու բախտը չեմ ունեցած ու իբրեւ պաշտօնակից ալ չեմ եղած. սակաւաթիւ հանդիպումներ միայն ունեցած ենք. անոնք բաւած են սակայն հետեւցնելու համար, որ հայերու՝ - եւ առաւելաբար սփիւռքահայերու- մեր ազգապահպանութեան առաքելութիւնը զգալի չափով բարելաւելու համար կարիքն ունինք իրեն նման անհատականութեանց:

Ճանաչումը չի գոյանար անպայման երկարատեւ առօրեայ սովորական յարաբերութիւններով: Ճանաչումը կրնայ սակայն կազմուիլ թէեւ կարճատեւ, բայց խորունկ հասկացողութեամբ:

***

Այսօր, գրասեղանիս վրայ ունիմ իր երկու գիրքերը՝ «**Պէտք չէ մոռցուին**», հրատարակուած 2009-ին, եւ «**Սիրուած դէմքեր, գիրքեր, իրագործումներ, եւ այլն**»ը, լոյս տեսած տարի մը ետք, որոնք կը պարտինք, նախորդ գիրքերուն նման, հեղինակին արժանաւոր զաւակներուն՝ Սիլվային, Ներսէսին եւ Արային նախաձեռնութեան:

«Պէտք չէ մոռցուին»ի մէջ Պապայեան կ՚արտայայտուի քսան հայերու մասին, մեծ մասամբ գրողներ (արձակագիր, վիպագիր, բանաստեղծ) եւ խմբագիրներ, կան նաեւ յուշագրողներ, կայ երգիծանկարիչ մը՝ Ալ. Սարուխանը, կայ նոյնիսկ ճարտարապետ մը՝ Շահէ Տէր-Գէորգեանը:

Ընթերցողը կրնայ զարմանալ, թէ ինչո՞ւ հեղինակը կը մտահոգուի որ անոնք բոլորն ալ մոռցուելու չեն, քանի որ անոնց մէջ կ՚երեւին ամենուս ծանօթ եւ բոլորէս սիրուած անուններ, ինչպէս Վահան Թոթովենցը, Անդրանիկ Ծառուկեանը, Անդրանիկ Անդրէասեանը, Ալեք Գլըճեանը, Գիրսամ Ահարոնեանը, որոնք չենք կասկածիր որ շուտ մոռցուելիք թանկագին գրողներ եղած ըլլային:

Մեր կարծիքով՝ Երուանդ Պապայեան զանոնք մէկտեղած եւ միաժամանակ հաւասարազօրած է թաքուն պատճառով մը, կ՚ուզէ շեշտել, թէ կան նաեւ ուրիշներ, որոնք չմոռցուելու արժանի են, հոգ չէ թէ բազմաթիւ պարագաներու բերումով ու վաղահաս մահով կամ կամքէ բոլորովին անկախ պատճառներով - կրնային շատերուն ուշադրութենէն վրիպիլ կամ յիշողութենէն անհետանալ, ինչպէս, օրինակ, ինծի մօտիկ տարաբախտ Նուպար Ակիշեանը, որ իր կեանքին վերջին տասնամեակին, իր մօտալուտ մահը խորապէս նախազգուշակելով, իր տասը հատորները հրապարակեց գերմարդկային հիանալի աճապարանքով մը:

Ընթերցողը կրնայ նաեւ զարմանալ, թէ ինչո՞ւ հեղինակը մէկու մը կենսագրականը քանի մը տողով տալէ ետք, երկարօրէն կը կեդրոնանայ անոր մէկ գործին վրայ: Այս զարմացումը նշմարեցինք նաեւ գիրքին յառաջաբանը գրած լրջախոհ խմբագիր եւ իր նրբերանգ վերլուծումներով ակնյայտնի Վաչէ Սիմիրճեանէն: Ան կը բացատրէր, յայտնելով, որ ներկայացուած գրական գործին բացառիկ կարեւորութիւնը պիտի մղէր ընթերցողը այդ գրողին միւս գործերուն ալ ծանօթանալու:

Կայ նաեւ ուրիշ ընդհանուր մտահոգութիւն մը, որ չ՚երեւիր անմիջապէս, բայց ուշադիր ընթերցողը կրնայ երեւան բերել զայն. այդ է Հայոց ցեղասպանութիւնը, որուն արհաւիրքները տարուած յուշագրողներ արժանացած էին Պապայեանի ամբողջական ուշադրութեան:

Ինչո՞ւ:

Այս էական «ինչո՞ւ»ին պատասխանը կարելի է գտնել իր երկրորդ հատորին «Սրտի խօսքին» մէջ, գրուած ամերիկահայ ծանօթ գրող Թորգոմ Փոստաճեանի կողմէ, որ Երուանդ Պապայեանի իր հակիրճ կենսագրականով կը յայտնէ, թէ հեղինակը անձամբ, մանուկ հասակին ապրած է ցեղասպանութեան արհաւիրքները. Պապայեանները ընտանեօք փախուստ տուած են Այնթապէն եւ զինադադարէն ետք վերադարձած Այնթապ: Ան կը գրէ նաեւ. «Երուանդ, եօթը տարեկան երախայ, հասակակիցներու հետ քար ու շաղախ կը կրէ ինքնապաշտպանական պատնէշներու շինութեան, փամփուշտներու տեղատարափին տակ»:

Ահա՛ այսպիսի ահաւոր մանկութեամբ հասակ առած Երուանդն է, որ իր կեանքն ամբողջ նուիրած եղաւ իր պաշտած հայ ազգին, դաստիարակչական վսեմագոյն առաքելութեամբ, հասցնելով հազարաւոր շրջանաւարտներ, որոնք այժմ ցրուած աշխարհի մէկ ծայրէն միւսը, մինչեւ այսօր հիացումով ու երախտագիտութեամբ կը յիշեն իրենց համակ նուիրում դարձած տնօրէնն ու ուսուցիչը:

Երկրորդ գիրքը, իր չորս բաժիններով, կ՚արձանագրէ սիրուած դէմքեր, որոնցմէ շատեր մահացած են, ինչպէս Ալեք Մանուկեանը, Սիլվա Կապուտիկեանը, Համբարձում Պէրպէրեանը. ուրիշներ ողջ եւ առողջ են, ինչպէս Վաչէ եւ Թամար Մանուկեանները: Երկրորդ մասը կը վերաբերի քանի մը հրապարակուած գիրքերու. երրորդ մասը՝ իրագործումներու, յիշելով Վահան Թէքէեան վարժարանը, Տիգրան Սմսարեանը, Սերոբ եւ Մարօ Պետրոսեանները եւ ուրիշ արժանաւոր անձեր: Ի վերջոյ՝ կայ նաեւ «եւայլն» մը, բառ մը, որ թերեւս նախընտրելի պիտի ըլլար, որ գոնէ գիրքին խորագրին մէջ տեղ գրաւած չըլլար...:

Մեզի համար, բնականաբար, Երուանդ Պապայեանը, իր ամուսնոյն միշտ զօրավիգ կանգնող անձնուէր տիկին Ռոզինով, կը ներկայանայ առաւելաբար եւ անմոռանալիօրէն իբրեւ Պէյրութի Վահան Թէքէեան վարժարանի հեղինակաւոր տնօրէնը, որ իր առաքելութեան սահմանները լայնցնելով, իր օրինակելի բարեացակամութեամբ դրոշմուած յարաբերութիւններով եւ հրատարակած գիրքերով, պէտք է բարի օրինակ դառնայ սփիւռքահայ երիտասարդներու, իր հետեւորդներուն, որպէսզի այսօր հայրենիքի պաշտպան հանդիսացող Սփիւռքը ի՛ր կարգին պաշտպանուած մնայ յաւիտեան, ամէն տեսակ այլասերումներէ:

Կարճ խօսքով՝ այս երկու գիրքերուն ընթերցումով յարաճուն գոհունակութեամբ վերագտայ նոյնինքն Երուանդ Պապայեանը, զոր ճանչցած էի:

**Դոկտ. ՆՈՒՊԱՐ ՊԷՐՊԷՐԵԱՆ**
**Բոստոն**

# Ռուսաստանն Ադրբեջանին ջրո՞վ է ճնշում

Երբ քաղաքական լծակների կիրառությունը նպատակահարմար չէ, գրպանին խփելն առավել գործառնական ու կիրառական է: Ու թեեւ միշտ չէ, որ տնտեսական ու ֆինանսական գործիքները ճնշման ու ազդեցության լծակների դերում են, ցանկության դեպքում, դրանք միշտ էլ կարելի է այդպիսիք ներկայացնել: Եվ եթե, ասենք, Իրանի դեմ Միացյալ Նահանգներն ու Իսրայելը փորձում են ներկա դրությամբ հենվել հենց տնտեսական պատժամիջոցների ու սահմանափակումների կիրառման վրա, կան շատ դեպքեր, երբ տնտեսական սահմանափակումներն ուղղակիորեն իրենց մասշտաբներով չեն կարող հանդես գալ որպես ճնշման լծակ:

Խոսքն այս պարագայում Ադրբեջանում ամենայն ակտիվությամբ քննարկվող մի թեմայի մասին է, թե Ռուսաստանը պատրաստվում է «առեւտրային պատերազմ» հայտարարել Ադրբեջանին՝ զգուշացնելով, թե կարգելի այդ երկրից ջրերի եւ ընկուզեղենի ներկրումը Ռուսաստան: Այդպիսի մի զգուշացում էլ Ռուսաստանից հասցեագրվել է Ուզբեկստանին եւ Տաջիկստանին:

Եթե Վրաստանի պարագայում գինու եւ հանքային ջրերի ներմուծումը Ռուսաստան արգելվեց նաեւ քաղաքական նկատառումներով, հաշվի առնելով, թե ինչ մասշտաբների էր հասնում երբեւէ այդքան խաղող չարտադրած Վրաստանից արտահանվող գինին վրացական տնտեսության կտրվածքով, ապա Ադրբեջանի դեպքում աղմուկ բարձրացնել ջրերի մուտքը Ռուսաստան արգելելու հեռանկարով՝ ի հայտ է բերում ոչ թե հենց այդ գործընթացի արմատները, այլ ընդհանրապես ռուս-ադրբեջանական հարաբերությունների խնդրահարույց պահերը:

Մասնավորապես, ջրերի որակական ցածր ցուցանիշների, նաեւ որոշ վնասատուների ռուսաստանյան գյուղատնտեսություն մուտքը փակելու պատճառով արգելման առնչությամբ ադրբեջանցիները մեջտեղ են բերել Գաբալայի ռադիոլոկացիոն կայանի վերաբերյալ տարաձայնությունները, ղարաբաղյան հարցում Ադրբեջանից ինչ-որ քայլեր ստանալու ռուսական «ցանկությունը», ադրբեջանական շուկայում «տեղեր գրավելու» նկրտումները եւ այլն:

Այս ամենում հետաքրքրական է, որ ռուս-ադրբեջանական հարաբերությունները, ադրբեջանցիների իսկ խոստովանությամբ, «սուր անկյուններ» ունեն, ավելին՝ խնդրահարույց պահեր ունեն: Բայց թե որքանով է այդ ամենը ջրեղեն Ռուսաստան արտահանելու արգելանքին հասել, երբ դրանով Ադրբեջանի տնտեսության աստված գիտե, թե որերորդ մասն է ներկայացված, կասկածի տեղիք չի տալիս, բայց փաստում է, որ հենց Ադրբեջանում ռուս-ադրբեջանական հարաբերությունները «խարխուլ» են պատկերացնում:

Ինչպես ասում են՝ առանց կրակ ծուխ չի լինում...

Ա. Հ.

# Զինվորական հեղաշրջում Մալիում



Մալիում իշխանությունը տիրացել է Ժողովրդավարության վերականգնման եւ պետության վերածնման ազգային կոմիտեն կապիտան Ամադու Սանոգոյի գլխավորությամբ: Այդ մասին մարտի 22-ին ազգային ռադիոյով եւ հեռուստատեսությամբ ունեցած ելույթում հայտարարել է խռովարար զինվորականների ներկայացուցիչ, լեյտենանտ Ամադու Կոնարեն:

Երկրի նախագահ Ամադու Տումանի Տուրեի եւ նախարարների մեծամասնության ճակատագիրն առայժմ անհայտ է: Խռովարար զինվորականներն ավելի վաղ հայտարարել էին, թե իրենք «վերջ են դրել անբանիմաց վարչակարգին եւ կասեցրել են սահմանադրության գործողությունը»: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ Մալիում պարետային ժամ է հաստատվել:

Երեկ գիշեր բանակի խռովարար զինվորները մայրաքաղաք Բամակոյում մարտերով գրավել էին նախագահական պալատը եւ ձերբակալել մի քանի նախարարների, այդ թվում արտգործնախարար Սումեյլու Բուբեյ Մայգային:

Նախագահ Ամադու Տումանի Տուրեն պնդում է, թե խոսքը ոչ թե վարչակարգի փոփոխման, այլ զինվորների խռովության մասին է, որոնք չեն ուզում երկրի հյուսիսում մարտնչել ապստամբ տուարեգների դեմ: Խռովարար զինծառայողները Մալիի նախագահին մեղադրում են այն բանում, որ նա բանակին բավարար զենքով ու պարենով չի ապահովում տուարեգների դեմ կռվելու համար:

Խռովարար զինվորականները նախագահական պալատից առաջ գրավել էին ազգային ռադիոյի ու հեռուստատեսության շենքը:

ՖՐԱՆՍԻԱ

# Թուլուզյան ահաբեկիչը սպանվել է զենքը ձեռքին




Ֆրանսիայի Թուլուզ եւ Մոնտոբան քաղաքներում օրերս 7 անձանց սպանած Մոհամմադ Մերահը երեկ Թուլուզում սպանվել է ոստիկանության հատուկ ստորաբաժանումների հետ փոխհրաձգության ժամանակ, հաղորդում է Ֆրանսպրեսը:

Հատուկ ջոկատը Մերահի տուն ներխուժելու որոշումն ընդունել է նրա հետ կապի երկարատեւ ընդհատումից հետո: Ներխուժման եւ փոխհրաձգության ընթացքում վիրավորվել է երեք ոստիկան. մեկի վիճակը ծանր է:

Գրոհի ժամանակ ոստիկաններն օգտագործել են պայթուցիկներ: Ըստ որոշ տվյալների, ահաբեկիչը թաքնված է եղել լոգարանում: Ներքգործնախարար Կլոդ Գեանը անձամբ ներկա էր գրոհին: Նա հայտարարել է, որ հանցագործը սպանվել է զենքը ձեռքին լոգարանի պատուհանից դուրս ցատկելուց հետո:

Մերահի սպանության մասին պաշտոնապես հայտարարել է նաեւ նախագահ Նիկոլա Սարկոզին:

Ավելի վաղ՝ մարտի լույս 21-ի գիշերը, Մերահը զանգահարել էր France24 հեռուստաընկերություն եւ պատասխանատվություն ստանձնել 7 սպանության համար: Թուլուզի հրեական դպրոցում նա սպանել էր 3 երեխայի եւ մանկավարժի, իսկ ավելի վաղ Մոնտոբանում սպանել էր 3 զինծառայողների: Այդ ամենը նա տեսագրել էր: Մերահը ասել էր, որ ինքը «Ալ Ղաիդայի» անդամ է, իսկ իր արարքները քաղաքական շարժառիթներ ունեն: Հրեական դպրոցում իր կատարած սպանությունները նա համարել է իսրայելցիների կողմից պաղեստինցի երեխաների սպանության պատասխանը, իսկ ֆրանսիացի զինծառայողների սպանությունը՝ վրեժ Աֆղանստանում ֆրանսիական զորքի ներկայության համար:

# Ճապոնիան կարող է խփել ԿԺԴՀ-ի արձակելիք արբանյակը

Ճապոնիայի պաշտպանության նախարարությունը Իսիգակի եւ Օկինավա կղզիներում շուտով տեղադրելու է հակահրթիռային պաշտպանության Patriot PAC-3 կայանքներ: Կիոդո գործակալությունը հաղորդում է, որ կայանքների շնորհիվ Ճապոնիան կկարողանա հարկ եղած դեպքում խփել ապրիլին արձակվելիք հյուսիսկորեական արբանյակը եւ մղիչ հրթիռը:

Ասոշիեյթեդ պրես գործակալության տվյալներով, ԿԺԴՀ-ն մտադիր է «Կվամենսոն-3» կապի արբանյակն արձակել ապրիլի 14-16-ը: Հյուսիսկորեական հեռագրական գործակալությանը վկայակոչելով՝ Ֆրանսպրեսը հաղորդում է, որ արբանյակն արձակվելու է ԿԺԴՀ առաջին ղեկավար Կիմ Իր Սենի 100-ամյակի առթիվ: Կիոդո գործակալությունը նշում է, որ նախատեսված ուղեգծի պահպանման դեպքում հյուսիսկորեական մղիչ հրթիռը պետք է անցնի ճապոնական Սակիսիմա կղզիների վրայով:

# Արյունոտ Նովրուզ Թուրքիայում

*Սպանվել է 6 ոստիկան, շուրջ 40-ը՝ վիրավորվել, կան մի քանի տասնյակ ձերբակալվածներ*

*1-ին էջից*

Էպոսում թշնամիները խարդախությամբ ծուղակի մեջ են գցում թուրքերին, բնաջնջելու մտադրությամբ անխնա ոչնչացնում են, ողջ են մնում միայն թուրքական բարգավաճ պետության խաքան Իլխանի որդին ու զարմիկը: Նրանք իրենց կանանց հետ ապաստանում են Բերրի մի կիրճում, որն ունենում է ընդամենը մեկ լեռնանցք: Նրանք այնտեղ բազմանում են, «Էրգենեքոն» կոչված այս կիրճից դուրս գալու համար անհրաժեշտ է լինում հալեցնել երկաթե սարը, մեծ կրակ են անում, ապա եւ տարածվում են աշխարհով մեկ:

Այլ կերպ, Նովրուզի կրակը, ըստ թուրքական էպոսի, ոչ այլ ինչ է, քան «Էրգենեքոնի» կիրճի ելքը փակող սարը հալեցնելու համար վառված կրակի խորհրդանիշը: Դա կարող էր թերեւս խորհրդանշել, եթե «Էրգենեքոնը» իսկապես էպոս լիներ, այլ ոչ թե անցած դարի 30-ականներին Թուրքական պատմական ընկերության գործունեությանը զուգընթաց հորինված հեքիաթ կամ երգիծական ցածր որակի ստեղծագործություն:

«Էրգենեքոնի» հեքիաթն, իհարկե, Նովրուզը յուրացնելու համար չի հորինվել: Պարզապես հարմարեցվել է համանուն տոնակատարությունների ընթացքը վերահսկելու թուրքական պետության շատ ազնիվ նպատակներին: Ինչո՞ւ վերահսկել: Հարցի պատասխանը միանշանակ է, Նովրուզի տոնակատարություններն արգելելու անկարողության պատճառով:

1925-ին շեյխ Սաիդի գլխավորած քրդական ապստամբության ճնշումից հետո Թուրքիայում պաշտոնապես արգելվեց հրապարակավ քրդերեն խոսելը: Ակնհայտ է, որ քրդերենի հետ պիտի արգելվեր նաեւ քրդական ավանդույթ հանդիսացող Նովրուզի տոնակատարությունը: Այս արգելքը տեւեց մինչեւ 90-ականները, երբ նախագահ Թուրգութ Օզալը Թուրքիայում քրդերի գոյության փաստի հետ ընդունեց նաեւ քրդական հարցի առկայությունը:

Նրա մահից հետո մինչ թուրքական իշխանությունները ջանում էին քրդական հարցը նույնացնել PKK-ի հարցի հետ, որպեսզի դրան կամայականորեն հաղորդեն ահաբեկչական բնույթ, Թուրքիայում բնակչության առնվազն 1/4 կազմող քրդերի պայքարը սահմանադրական իրավունքների հարթությունից փոխադրվեց «Ժողովրդավարական ինքնավարության» հարթությունը, ինչի մասին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի հուլիսի 23-ի ընտրություններից հետո սկսել է արտահայտվել քրդամետ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությունը: Զուգընթաց դրան, հայտնի քուրդ գործիչ տիկին Լեյլա Զանան մարտի 21-ին Թունջելիում (Դերսիմ) մասնակցելով Նովրուզի տոնակատարություններին, ինքնավարության համար հանրաքվե է պահանջել:

Սա նշանակում է, որ Նովրուզը Թուրքիայի քրդերի համար դարձել է նաեւ իղձերի ու նպատակների արտահայտման միջոց: Թերեւս դրանով է բացատրվում տոնակատարությունները պետականորեն կազմակերպելու միջոցով Նովրուզի ընթացքը վերահսկելու թուրքական իշխանությունների նախաձեռնությունը, որն, ըստ ամենայնի, ձախողվում է:

Ձախողման մասին են վկայում Նովրուզը մարտի 21-ից շուտ նշելու քրդական ձեռնարկումները ոչ միայն երկրի քրդաբնակ շրջաններում, այլեւ Ստամբուլում, Իզմիրում, Մերսինում, Ադանայում եւ բազմաթիվ այլ քաղաքներում: Ձեռնարկումների պետականորեն կանխարգելումը բուռն վրդովմունք է առաջացրել քուրդ բնակչության շրջանում: Նախքան մարտի 21-ը Թուրքիայի բազմաթիվ քաղաքներում ծայր առած քրդերի ելույթներին թուրքական անվտանգության ուժերի միջամտությամբ առաջացած բախումները փաստորեն հանգեցրել են քաղաքացիական անհնազանդության:

Այդ բախումների հետեւանքով Նովրուզի նախօրեին Հաքքյարիում եւ Շըրնաքում՝ 5, իսկ Բաթմանում 3 ոստիկան վիրավորվել են հրազենից: Զուգահեռաբար ձերբակալվել են Էրզրումում՝ 21, Իգդիրում՝ 20, Աղրիում՝ 15, Մանիսայում՝ 14, Ուրֆայում՝ 32, Ջիզրեում՝15 ցուցարար: Մարտի 20-ին Մանիսայում եւ Մուշում եւս 25 մարդ է ձերբակալվել: Բաթմանում տեղի են ունեցել նոր բախումներ, ձերբակալվել է 148 ցուցարար, 31 ոստիկան վիրավորվել է:

Տեղի են ունեցել նաեւ սպանություններ, ինչպես, ասենք՝ մեկ ոստիկան մարտի 20-ին Ջիզրեում: Հատկանշական է, որ ահաբեկիչներին ձերբակալելու համար անվտանգության ուժերի ձեռնարկած գործողություններում հենց մարտի 21-ին Շըրնաքում սպանվել է ներքին գործերի հատուկ նշանակության զորքերի 5 ոստիկան:

Ի դեպ, այդ օրը Թուրքիան թաղման արարողությամբ սգում էր Աֆղանստանում ուղղաթիռի խորտակման հետեւանքով զոհված 12 բարձրաստիճան զինծառայողի մահը: Եթե Նովրուզին քրդերի դրսեւորած քաղաքացիական անհնազանդությունը համադրենք «Ժողովրդավարական ինքնավարության» հարաճուն պահանջների հետ, ապա կարող ենք ասել, որ քրդական հարցը Թուրքիայում թեւակոխում է սպառնալից փուլ:

ԱԶԳ

## Մշակույթ

«**Ազգի**» ընթերցողներին արդեն տեղեկացրել էինք, որ մարտի 21-28-ը Երեւանում, Գյումրիում եւ Վանաձորում կանցկացվեն Ուկրաինայի մշակույթի օրեր: Երեկ ՀՀ մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանը** ընդունեց Ուկրաինայի պատվիրակությանը Ուկրաինայի մշակույթի նախարար **Միխայիլ Կոզինյակի** գլխավորությամբ: Այնուհետեւ հյուրերը հանդիպեցին լրագրողների հետ: Հասմիկ Պողոսյանը ներկայացրեց հյուրերին եւ ասաց. «Վերջին մեկ տարվա ընթացքում այն ավանդույթները, որ ստեղծվել էին երկու երկրների միջեւ հատկապես գրական ոլորտում, զարգացրեցինք ավելի մեծ ձեւաչափերի: Անցած տարի հուլիս ամսին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցի շրջանակներում հայ

ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը հիշեցրեց այն լավ ու բարի ժամանակները, երբ երկու երկրների միջեւ գրական ամուր կամուրջ էր գործում եւ որը փլուզվեց: «ԽՍՀՄ-ի փլուզումից խզվեցին կապերը եւ 1999-ին միայն «Գարուն» ամսագիրը տպագրեց ժամանակակից ուկրաինական գրականությունը, որը բացվեց ՀՀ-ում Ուկրաինայի նախկին դեսպան Ալեքսանդր Բոժկոյի առաջաբանով` «Նոր շրջափուլ ավանդների վերականգնման» խորագրով», ասաց Լեւոն Անանյանը: 13 տարվա ընդմիջումից հետո հայ գրականության ընտրանին հնարավոր եղավ ներկայացնել ուկրաիներեն: **Ալ. Բոժկոն** նշեց, որ ինքը հանդիսանում է նաեւ Հայաստանի լրագրողների միության անդամ եւ մեջբերեց ուկրաինական հայտնի բա-

կու երկրների մշակութային համագործակցությանը: Շնորհանդեսին ներկայացվեց նաեւ գրող, թարգմանիչ Միրոն Նեստերչուկի «Հայաստանի պոեզիա» ժողովածուն, որը հրատարակվել է 2011 թ. Ուկրաինայում հայ մշակույթի օրերի անցկացման կապակցությամբ: Անթոլոգիայում ընդգրկված է հայ գրականությունը բանահյուսությունից, ժողովրդական խաղիկներից ու տաղերից մինչեւ միջնադարի գոհարներ` Սահակ Պարթեւ, Մեսրոպ Մաշտոց, Խորենացի, Նարեկացի, Շնորհալի, Սայաթ-Նովա, Թումանյան, Տերյան, Սիամանթո, Վարուժան, Իսահակյան, Չարենց, Սեւակ... ավելի քան երեք տասնյակ հեղինակների ստեղծագործություններ` ուկրաիներեն թարգմանությամբ:

# Ուկրաինայի մշակույթի օրերը մեկնարկեցին

մշակույթը ներկայացրինք Ուկրաինայում եւ փոխադարձ համաձայնությամբ այսօր հյուրընկալում ենք ուկրաինական կողմին Հայաստանում»: Ուկրաինայի մշակույթի նախարար Միխայիլ Կուզինյակն ասաց. «Երբ մենք ոտք դրեցինք հայկական հողին, զգացինք, որ մենք եկել ենք բարեկամների ու ընկերների մոտ, որոնք ջերմ ու բաց սրտով ընդունեցին մեզ, որով էլ կրկին հաստատվեց, որ հայ-ուկրաինական բարեկամությունը ամուր է եւ երկու երկրների ժողովուրդները շատ մտերիմ են: Մենք դեռ տպավորված ենք «Հայաստանի մշակույթի օրերով», որ անցկացվեց Ուկրաինայում եւ ահա այսօր մենք այստեղ ենք մեր մշակույթը ձեզ ներկայացնելու համար»:

Այնուհետեւ նախարարը նշեց, որ Ուկրաինայում հայկական համայնքը բավական կարեւոր դեր ունի (ղեկավար Վիլեն Շատինյան) եւ մեկ օր առաջ Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յանուկովիչը հանդիպել է երկրում գործող բոլոր եկեղեցիների հոգեւոր հայրերի հետ, որոնց թվում է եղել նաեւ Հայ եկեղեցու Ուկրաինայի թեմի առաջնորդը: Այդ հանդիպման ընթացքում խոսվել է նաեւ հայկական հուշարձաններում, եկեղեցիներում վերականգնողական ու վերանորոգման աշխատանքներ տանելու շուրջը: Համաձայնություն է ձեռք բերվել, որ այդ աշխատանքներին իրենց մասնակցությունն ունենա նաեւ Ուկրաինայում հայկական համայնքը` Ղրիմում, Լվովում, Կիեւում (ի դեպ, այժմ կառուցվում է մեծ եկեղեցի-Մ. Մ.): Նախարարն ասաց նաեւ, որ հուլիսին Ուկրաինայում է անցկացվելու ֆուտբոլի առաջնությունը եւ հույս հայտնեց, որ իրենց թիմի երկրպագուների թվում են նաեւ հայերը ու սրտանց բոլորին հրավիրեց այդ օրերին անցկացվող Բիենալեին, որին արդեն մասնակցության հայտ են ներկայացրել 30 երկիր:

Հայաստանում Ուկրաինայի դեսպան **Իվան Կուխտան** կարեւորեց մշակույթի օրերի անցկացումը, որոնք անցնում են երկու երկրների նախագահների հովանու ներքո: «Մենք շատ լայնածավալ ծրագրեր ունենք եկող համագործակցության ուղղությամբ ոչ միայն մշակութային, նաեւ այլ բնագավառներում, որոնք երկարաժամկետ են լինելու», ասաց դեսպանը:



նաստեղծ Պավլո Տիչինայի խոսքերը. «Ավելի մեծ ուրախություն չկա, երբ հանդիպում են ժողովուրդները»: «Ահա արդեն այստեղ են Ուկրաինայի մշակույթի, գրականության, կերպարվեստի ներկայացուցիչները, նախարարները ու միասին շատ քննարկումներ են անում...»:

Ուկրաինական մշակույթի օրերը մեկնարկեցին ՀԳՄ կազմակերպված «Հայ գրատպության 500-ամյակին» նվիրված ձեռնարկով: Կայացավ ուկրաինական «Всесвит» ամսագրի, որն ի դեպ հրատարակվում է 1925 թ.-ից, հոբելյանական համարի հայաստանյան շնորհանդեսը: Ամսագրի գլխավոր խմբագիր Օլեգ Միկիտենկոն «**Ազգի**» հետ զրույցի ընթացքում ասաց, որ նման համար առաջին անգամ է թողարկվում եւ այն ամբողջովին նվիրված է հայ գրավոր մշակույթին, պատմական տարբեր դրվագներին, հիշարժան դեպքերին ու դեմքերին: «Մենք մեծ սիրով ու ուշադրությամբ ենք վերաբերվել ամեն մի տողի թարգմանությանը: Արդեն իսկ 1000 բաժանորդ ստացել է «Всесвит» ամսագիրը ու իրենց ոգեւորիչ կարծիքն են հայտնել: Դա նշանակում է, որ հայ ժողովրդի գրականությունն ու մշակույթը, պատմությունն ու առօրյան ուկրաինացիներին հոգեհարազատ է»: Ամսագրում ներկայացված են հայ դասական ու ժամանակակից գրողների ստեղծագործությունների ընտրանին: Իսկ ամսագրի առաջին էջերում տեղ են գտել երկու երկրների նախագահների, առաջին դեմքերի ողջույնի ուղերձներն ու բարեմաղթանքները` ուղղված եր-

Երրորդ գիրքը, որը լույս է տեսել հայերեն լեզվով, 2012 թ. պետպատվերի շրջանակներում, մեկ այլ թարգմանական հրատարակություն է Միխայիլ Կոցյուբինսկու «Մոռացված նախնիների ստվերները» վիպակը, որի հիման վրա անվանի կինոռեժիսոր Փարաջանովը նկարել է ֆիլմ: Գիրքը ներառում է նաեւ դրվագներ համանուն ֆիլմի նկարահանման պատմությունից, Սերգեյ Փարաջանովի «Հավերժական շարժում» էսսեն եւ լուսանկարներ, որոնք առաջին անգամ են տպագրվում: Գրքի առաջաբանը գրել է Ալեքսանդր Բոժկոն, թարգմանությունը` Ռաիսա Ղարագյոզյանի:

Հայ-ուկրաինական գրական շավիղները ամբողջանում են ՀՀ-ում ուկրաինական համայնքի նախաձեռնությամբ, ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ հրատարակվող «Դնիպրո Սլավուտիչ» ամենամսյա երկլեզու թերթը (1000 օրինակ), որը հավասարապես անդրադառնում է թե համայնքի խնդիրներին, թե լեզվի պահպանությանը, թե հայ-ուկրաինական մշակույթի անդրադարձին:

Երեկոյան «Արամ Խաչատրյան» համերգասրահում Ուկրաինայի մշակույթի օրերի գալա համերգին հանդես եկան «Киевська камерата» մենակատարների ազգային անսամբլը եւ Իվան-Ֆրանկովսկի «Гапицкі передзвони» երգչախումբը: Ի դեպ, այսօր այդ անսամբլները համերգներով հանդես կգան Գյումրու Վ. Աճեմյանի անվ. դրամ. թատրոնում եւ Սպիտակի մշակույթի պալատում: Իսկ մարտի 26-ին` «Առնո Բաբաջանյան» համերգասրահում:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**


### Յայտարարութիւն

Ազգային միասնութեան ուխտ կուսակցութիւնը 2011 թ. ելեւմտից ոչ մի գործարք չի կատարել:

21 մարտի 2012 թ.
Կուսակցութեան նախագահ`
Ռաֆայէլ Համբարձումեան

### Կորել է

«Վիկի ՕՖ» ՍՊԸ-ին պատկանող (լիցենզիա N 00970) ՁԱՁ-SENS մակնիշի, S 8052 դեղին պետ. համարանիշով ավտոմեքենայի ներդիրը:

Համարել անվավեր:

Հիմնադրամների հոգաբարձուների խորհրդի
«----» ------------ 2012թ. թիվ ----- որոշմամբ

### ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<u>«Գուրգեն Մելիքյանի` Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» Հիմնադրամ</u>
**հիմնադրամի 2011թ. գործունեության մասին**

**1. Հիմնադրամի լրիվ անվանումը`** <u>«Գուրգեն Մելիքյանի` Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» Հիմնադրամ:</u>
1.1 **Գրանցման համարը** – 222.160.00970,
1.2 **Գրանցման ամսաթիվը** – 08.12.1998թ,
1.3 **Գտնվելու վայրը** – <u>ԼՂՀ, Քաշաթաղի շրջան, ք. Բերձոր,</u>
1.4 **Հեռ.** -
1.5 **Բջջ.** –
1.6 **Կայք**
1.7 **էլ. փոստ** –
**2. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը`** Գուրգեն Մելիքյան
**3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները`**
--------------------------------------------------------------------,
**4. Աշխատակազմը`** Գուրգեն Մելիքյան,
**5. Իրականացված ծրագրերը`** Բարեգործական օգնություն Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գտնվող բազմազավակ ընտանիքներին` ուսման վարձի վճարման և խոշոր եղջերավոր անասուն ձեռք բերելու գործում:
**6. Ֆինանսավորման աղբյուրները`** *2011թ-ի ֆինանսական միջոցները գոյացել են անհաս բարերարների և տարբեր նվիրատուների նվիրատվություններից, հանգանակություններից:*
--------------------------------------------------------------------,
**7. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը`** *2011թ-ին ծախսվել է` 42665.0 հազ. դրամ:*
**7.1 Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը`** *Հիմնադրամի միջոցներից կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար 2011թ. թ-ին ծախսվել է` 42665.0 հազ. դրամ:*
8. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի անվանումը` «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ:
9. Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը 2 թերթից:
***10. Հիմնադրամի տնօրեն Գուրգեն Մելիքյան***
***11. Գլխավոր հաշվապահ***

*ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն / Լիցենզիա ԱԾ N052*

*«Գուրգեն Մելիքյանի` Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» Հիմնադրամ 2011թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ*

### ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*«Գուրգեն Մելիքյանի` Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին*
*Տնօրեն` Գուրգեն Մելիքյանին*

**Եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ**

Մեր կողմից իրականացվել է «Գուրգեն Մելիքյանի` Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» Հիմնադրամի կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը առ 31-ը դեկտեմբերի 2011թ-ի, հաշվետու տարվա ավարտված համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները եւ այլ բացատրական տեղեկատվություն:

**Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

**<u>Աուդիտորի պատասխանատվությունը</u>**

Մենք պատասխանատու ենք աուդիտի ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները եւ պլանավորել եւ անցկացնել աուդիտը` ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների եւ սխալների հետեւանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր` ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե Հիմնադրամի ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների եւ ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են եւ համապատասխան` մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

**Կարծիք**

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Գուրգեն Մելիքյանի` Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների» Հիմնադրամի ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2011թ., ինչպես նաեւ նրա գործունեության արդյունքները ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու 2011թ. տարվա համար` ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

**Հանգամանքները լուսաբանող պարագրաֆ**

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլված 2010թ. համադրելի տեղեկատվությունը աուդիտի չի ենթարկվել:

*Հաստատված է*
*«Երեւան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ*
*Տնօրեն` Լ. Ղոնյան*
*Որակավորման վկայական թիվ 022*

*Աուդիտոր` Ա. Բերբերյան*
*Որակավորման վկայական թիվ 017*

*«22» մարտի 2012թ.*

*ՀԱՍՏԱՏՎԱԾ Է*
*Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի*
*12 մարտի 2012 թ. որոշմամբ*

### Р²ЮмºомафВЪафЬ

«Ջավախք» բարեգործական հիմնադրամի 2011 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը` «ՋԱՎԱԽՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

1.1. Գրանցման համարը` 209, 1.2 Գրանցման ամսաթիվը` 09.04.2001 թ., 1.3. Գտնվելու վայրի հասցեն` ք. Երեւան, Հանրապետության 47, 1.4. Հեռ. 58-06-06, 1.5. Բջջ. 091-92-49-74, 1.6. Կայք չունի, 1.7. Էլ. փոստ չունի

«Ջավախք» բարեգործական հիմնադրամը 2011 թ. չի գործել, գույք չի օգտագործվել, ծրագրեր չի իրականացվել, ֆինանսական հոսքեր չեն եղել:

***Հիմնադրամի տնօրեն Վ. Թադեւոսյան***

# Մելքումյանն ու Հովհաննիսյանն առաջատարների թվում են

Պլովդիվում ընթացող շախմատի Եվրոպայի տղամարդկանց անհատական առաջնության 2-րդ տուրում էլ Հրանտ Մելքումյանն ու Ռոբերտ Հովհաննիսյանն իրենց օգտին հաղթական միավորներ գրանցեցին: Հրանտը հաղթեց վրացի միջազգային վարպետ Դավիթ Բենիձեին, Ռոբերտը պարտության մատնեց ՖԻԴԵ-ի վարպետ Էյլոն Նակարին: 2 տուրից հետո Մելքումյանն ու Հովհաննիսյանը 38 շախմատիստների հետ 2-ական միավորով գլխավորում են մրցաշարային աղյուսակը:

2-րդ տուրում հաղթանակներ տոնեցին նաեւ Գաբրիել Սարգսյանն ու Տիգրան Պետրոսյանը, որոնք մեկնարկում հաշտություն էին կնքել մրցակիցների հետ: Գաբրիելը հաղթեց միջազգային վարպետ Անդրեաս Հագենին, իսկ Տիգրանը պարտության մատնեց ՖԻԴԵ-ի վարպետ Վեսելին Պանտեւին: Մեր երկու շախմատիստները վաստակել են 1,5-ական միավոր:




Նույնպիսի արդյունք ունեն նաեւ Սերգեյ Մովսիսյանը, Զավեն Անդրեասյանն ու Սամվել Տեր-Սահակյանը, որոնք մեկնարկում հաղթելուց հետո 2-րդ տուրում հաշտություն կնքեցին մրցակիցների հետ: Մովսիսյանը ոչ-ոքի խաղաց գրոսմայստեր Սիպկե Էռնստի հետ, Անդրեասյանը միավորը կիսեց գրոսմայստեր Վլադիմիր Օնիշչուկի հետ պարտիայում, իսկ Տեր-Սահակյանը հաշտություն կնքեց գրոսմայստեր Վիկտոր Լազնիչկայի հետ մրցավեճում:

Իրենց 2-րդ պարտիաներն էլ ոչ-ոքի ավարտեցին Վլադիմիր Հակոբյանն ու Հովհաննես Գաբուզյանը, որոնք մրցում էին միմյանց հետ: Կրկին անհաջողության մատնվեց Վլադիմիր Պողոսյանը՝ զիջելով միջազգային վարպետ Անդրեաս Դիրմահրին: Առաջին պարտությունը կրեց Արման Փաշիկյանը՝ զիջելով գրոսմայստեր Իլյա Խմելնիկերին: Արմանը վաստակել է մեկ միավոր:

# Եզրափակչում՝ «Յուվենտուսն» ու «Նապոլին»

Իտալիայում եւս որոշվեցին ֆուտբոլի երկրի գավաթի խաղարկության եզրափակչի մասնակիցները: Պատվավոր մրցանակը կվիճարկեն Թուրինի «Յուվենտուսն» ու Նեապոլի «Նապոլին»:

Առաջինը եզրափակչի ուղեգիր նվաճեց «Յուվենտուսը», որը սեփական հարկի տակ հյուրընկալել էր «Միլանին»: Առաջին խաղում հյուրընկալվելիս «Յուվենտուսը» հաղթել էր 2-1 հաշվով: Պատասխան խաղում դաշտի տերերը պարտվեցին նույնպիսի հաշվով: Արդեն 28-րդ րոպեին Դել Պիեռոն առաջ մղեց «Յուվենտուսին», սակայն հետագայում Մեսբան ու Լոպեսը 2 գոլ խփեցին: Նշանակվեց լրացուցիչ ժամանակ, որում ավելի հաջողակ գտնվեց «Յուվենտուսը»: 96-րդ րոպեին Վուչինիչը խփեց հաղթական գնդակը՝ եզրափակչի ուղեգիր պարգեւելով «Յուվենտուսին»:



Այս խաղում «Յուվենտուսի» առաջատար եւ թիմի խորհրդանիշ Ալեսանդրո Դել Պիեռոն նոր ռեկորդ սահմանեց: Նա իր մարզական կարիերայում «Յուվենտուսի» մարզաշապիկով խաղադաշտում է գտնվել 48.610 րոպե: Նախկին ռեկորդը պատկանում էր թիմի նախկին պաշտպան Գայետանո Շիրեային, որն անցկացրել էր 48.559 րոպե:

Գավաթի եզրափակչի 2-րդ մասնակիցը որոշվեց «Նապոլիի» եւ «Սիենայի» մրցավեճում: Առաջին խաղում սեփական հարկի տակ «Սիենան» հաղթել էր 2-1 հաշվով: Նեապոլում «Նապոլիին» հաջողվեց ռեւանշի հասնել 2-0 հաշվով եւ 15 տարվա ընդմիջումից հետո կրկին եզրափակչի ուղեգիր նվաճել: Արդեն 11-րդ րոպեին մրցակցի պաշտպան Վերգասոլան գնդակն ուղարկեց սեփական դարպասը: 20 րոպե անց Կավանին 2-րդ գոլը խփեց՝ վճռելով հանդիպման ելքը:

Եվ այսպես, մայիսի 20-ին Հռոմի «Օլիմպիկո» մարզադաշտում կայանալիք գավաթի վճռորոշ խաղում պատվավոր մրցանակը կվիճարկեն «Յուվենտուսն» ու «Նապոլին»: Մրցակիցներն առաջին անգամ են հանդիպելու գավաթի եզրափակչում: Վերջին անգամ «Յուվենտուսը» եզրափակչում խաղացել էր 2004-ին, իսկ «Նապոլին» հանդես էր եկել 1997-ին:

# Հավաքականների կազմերը ճշգրտվեցին

**Մարմնամարզության Հայաստանի առաջնության ավարտից հետո, որում բազմամարտում չեմպիոնի տիտղոսը նվաճեց Արթուր Դավթյանը, ճշգրտվել են երկրի տղամարդկանց եւ երիտասարդների հավաքականների կազմերը:**

**Մարտի 28-30-ը Քաթարի մայրաքաղաք Դոհայում անցկացվելիք մարմնամարզության աշխարհի գավաթի խաղարկությունում Հայաստանը կներկայացնեն 4 մարմնամարզիկներ՝ Արթուր Դավթյանը, Վահագն Դավթյանը, Արթուր Թովմասյանն ու Սերոբ Սողոմոնյանը:**

**Հաջորդ լուրջ քննությունը մեր մարմնամարզիկների համար կլինի Ֆրանսիայի Մոնպելյե քաղաքում մայիսի 21-27-ը կայանալիք Եվրոպայի թիմային 30-րդ առաջնությունը: Այդ մրցումներին Հայաստանի տղամարդկանց հավաքականը կներկայանա Արթուր Դավթյան, Հարություն Մերդինյան, Վահագն Ստեփանյան, Վահագն Դավթյան, Վահան Վարդանյան կազմով: Երիտասարդների մրցավեճին կմասնակցեն Վիգեն Խաչատրյանը, Արմեն Պետրոսյանն ու Արամ Մովսիսյանը:**

**Ինչպես հայտնի է, հայ մարմնամարզիկներից առայժմ միայն Արթուր Դավթյանն է օլիմպիական ուղեգիր նվաճել: Նրա համար նախատեսվում է ապրիլին ուսումնամարզական հավաք կազմակերպել Իրանում: Մինչեւ օլիմպիադա մեկնելը Արթուրի համար ուժերի լավ ստուգատես կլինի հունիսի 10-15-ը Երեւանում կայանալիք Ալբերտ Ազարյանի մրցանակների միջազգային ավանդական մրցաշարը:**

# «Բավարիան» կվիճարկի երկրի գավաթը

Մյունխենի «Բավարիայի» ֆուտբոլիստները մտան Գերմանիայի գավաթի եզրափակիչ: Կիսաեզրափակիչ խաղում մյունխենցիներին հաջողվեց 11 մ հարվածներով առավելության հասնել Մյունխենգլադբախի «Բորուսիայի» նկատմամբ: Խաղի հիմնական ու լրացուցիչ ժամանակում դարպասները մնացին անառիկ, թեեւ 2 թիմերն էլ գոլ խփելու մի քանի լավ պահեր ունեցան: 11 մ հարվածներն իրացնելիս վրիպեց «Բորուսիայի» պաշտպան Դանտեն, իսկ Ռոյսի հարվածը հետ մղեց «Բավարիայի» դարպասապահ Նոյերը: «Բավարիան» հաղթեց 4-2 հաշվով:

Հարկ է նշել, որ ընթացիկ մրցաշրջանում «Բավարիային» առաջին անգամ հաջողվեց առավելության հասնել «Բորուսիայի» նկատմամբ: Առաջնությունում կայացած 2 հանդիպումներում էլ «Բորուսիան» հաղթել էր (1-0, 3-1): Գավաթի եզրափակիչ խաղում մայիսի 12-ին կհանդիպեն Մյունխենի «Բավարիան» ու Դորտմունդի «Բորուսիան»:

## ԳԵՂԱՍԱՀՔ

# Սլավիկ Հայրապետյանը հանդես կգա աշխարհի առաջնությունում

**Մարտի 25-ից ապրիլի 2-ը Ֆրանսիայի Նիցցա քաղաքում կայանալիք գեղասահքի աշխարհի մեծահասակների առաջնությունում Հայաստանը կներկայացնի 15-ամյա Սլավիկ Հայրապետյանը: Այդ իրավունքը նա նվաճել է եղբոր՝ Սարգիս Հայրապետյանի հետ հեռակա մրցավեճում՝ գերազանց հանդես գալով Ռիգայում:**

**Սլավիկի համար աշխարհի մեծահասակների առաջնությունը կլինի ընթացիկ մրցաշրջանում միջազգային խոշոր 5-րդ մրցաշարը: Պատանի գեղասահորդն իրեն լավ էր դրսեւորել Օբերսդորֆում եւ Հելսինկիում կայացած մրցաշարերում՝ զբաղեցնելով համապատասխանաբար 5-րդ եւ 7-րդ տեղերը: Շեֆիլդում անցկացված Եվրոպայի մեծահասակների առաջնությունում Սլավիկը հաղթահարեց նախնական փուլը՝ գրավելով 28-րդ տեղը: Իսկ Մինսկում կայացած մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնությունում հայ գեղասահորդը 26-րդն էր:**

**Ֆրանսիա մեկնող Հայաստանի պատվիրակության կազմում են նաեւ գեղասահքի հանրապետական ֆեդերացիայի փոխնախագահ Արարատ Զաքարյանը եւ հավաքականի գլխավոր մարզիչ Սամվել Հայրապետյանը, որը Սլավիկի հայրն է:**

# Հաղթական մեկնարկ

**Դավիթ Նալբանդյանը հաղթանակով մեկնարկեց ԱՄՆ-ի Մայամի քաղաքում սկսված «Սոնի Էրիկսոնի» թենիսի մրցաշարում: Նա երկու խաղափուլում պարտության մատնեց բելգիացի Սթիվ Դարսիսին (6-4, 7-6): Հաջորդ փուլում Նալբանդյանը կմրցի խորվաթ Անտոնիո Վեիչի հետ, որը պայքարից դուրս էր մղել ամերիկացի Դենիս Կուդլային (2-6, 6-2, 6-1):**

# ՀՖՖ պատվիրակությունը մասնակցում է ՈՒԵՖԱ-ի կոնգրեսին

**ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանն ու ՀՖՖ առաջին փոխնախագահ եւ գործադիր տնօրեն Արմեն Մինասյանը Ստամբուլում մասնակցում են ՈՒԵՖԱ-ի 36-րդ կոնգրեսի աշխատանքներին: Կոնգրեսի պատվիրակների հաստատմանը կներկայացվի ՈՒԵՖԱ-ի 2010-2011-ի ֆինանսական զեկույցը, ինչպես նաեւ կազմակերպության 2012-2013-ի բյուջեն:**

**Կքննարկվեն նաեւ բազմաթիվ այլ հարցեր, մասնավորապես փոփոխությունները ՈՒԵՖԱ-ի կանոնադրության եւ ՈՒԵՖԱ-ի կոնգրեսի անցկացման ընթացակարգի մեջ: Սպասվում է, որ կոնգրեսի մասնակիցները կհաստատեն խաղացողի պայմանագրում նվազագույն պահանջներին վերաբերող համաձայնագիրը:**

**ՈՒԵՖԱ-ի կոնգրեսն այդ կազմակերպության գերագույն մարմինն է: Առաջին կոնգրեսն անցկացվել է 1955-ին Վիեննայում: Մինչեւ 2002-ը կոնգրեսն անցկացվում էր 2 տարին մեկ անգամ, իսկ դրանից հետո անցկացվում է տարին մեկ, որպես կանոն ՖԻՖԱ-ի կոնգրեսից առաջ: Այս տարի ՖԻՖԱ-ի կոնգրեսը տեղի կունենա մայիսի 24-25-ին:**

**ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը Ստամբուլում հանդիպումներ կունենա ՈՒԵՖԱ-ի ղեկավարների, ազգային ֆեդերացիաների նախագահների հետ:**

# Ամենահարուստը Ժոզե Մոուրինյուն է

**«Ֆրանս ֆուտբոլ» շաբաթաթերթը հրապարակել է նաեւ աշխարհի ամենաբարձր վարձատրվող մարզիչների ցանկը: Այն գլխավորում է Մադրիդի «Ռեալի» պորտուգալացի գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուն, որի տարեկան աշխատավարձը 14,8 մլն եվրո է: 2-րդ տեղում ՊՍԺ-ի գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին է՝ 13,5 մլն եվրո: «Բարսելոնի» գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան ստանում է 9,5 մլն եվրո:**



**Ամենահարուստ մարզիչների լավագույն տասնյակում են նաեւ Արսեն Վենգերը («Արսենալ»)՝ 9 մլն եվրո, Գուս Հիդինկը («Անժի»)՝ 8,6 մլն, Ֆաբիո Կապելոն (Անգլիայի հավաքականի նախկին գլխավոր մարզիչ)՝ 8,5 մլն, Ալեքս Ֆերգյուսոնը («Մանչեսթր Յունայթեդ»)՝ 8 մլն, Դիկ Ադվոկատը (ՌԴ հավաքական)՝ 7 մլն, Խոսե Անտոնիո Կամաչոն (Չինաստանի հավաքական)՝ 6 մլն, Ռոբերտո Մանչինին («Մանչեսթր Սիթի»)՝ 5,9 մլն:**

# Ռիվալդոն նշանառությունը չի կորցրել

**Բրազիլացի հանրահայտ ֆուտբոլիստ, 2002-ի աշխարհի չեմպիոն Ռիվալդոն չնայած ֆուտբոլային պատկառելի տարիքին, շարունակում է արդյունավետ խաղ ցուցադրել: 40-ամյա Ռիվալդոն Անգոլայի առաջնության 3-րդ տուրում «Կաբուշպոր» թիմի կազմում հեթ տրիկի հեղինակ դարձավ՝ ապահովելով «Կաալուի» նկատմամբ հաղթանակը՝ 3-1: Դա Ռիվալդոյի թիմի առաջին հաղթանակն էր առաջնությունում:**

**Մինչեւ Անգոլա տեղափոխվելը Ռիվալդոն խաղում էր Ուզբեկստանի չեմպիոն «Բունյոդկորում»: Ժամանակին նա հանդես է եկել նաեւ իսպանական «Բարսելոնում» եւ հունական «Օլիմպիակոսում»:**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Ձեւավորող համակարգեր հիմնադրամի 2011թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի լրիվ անվանումն է «Ձեւավորող համակարգեր հիմնադրամ»
2. Հիմնադրամը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 29.10.2010թ.-ին, պետական գրանցման վկայական՝ 03 Ա 089227
3. Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք.Երեւան, Աբելյան 6/1, հեռ. 095 294833
4. Հիմնադրամը 2011-ի ընթացքում իրականացրել է նորարար ծրագրավորման դասընթացների մշակում եւ փորձարկում:
5. Ֆինանսավորման աղբյուրները. հիմնադրի՝ Արման Առաքելյանի կողմից ֆինանսավորվել է 205.000 դրամ, դասընթացների մասնակիցների կողմից՝ 375.000 դրամ:
6. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 580.000 դրամ:
7. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝ 580.000 դրամ:

Սույն հաշվետվությունը հաստատված է Ձեւավորող համակարգեր հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ 20.02.2012թ.-ին կայացած նիստի կողմից:

*Տնօրեն՝ Ա. Հարությունյան*

